

Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեան երէկ նշանակեց Հայաստանի Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովի 3 նոր անդամներ՝ Գարեգին Ապրեանը, Արթուր Պողոսեանը եւ Արմէն Մինանեանը: Վերջին երկուքը մաս կը կազմէին նախկին յանձնաժողովին: Նկատելի է, որ նախագահ Քոչարեան Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովի անդամ չէ վերանշանակած անոր նախկին նախագահը՝ Արտակ Սահարաշեանը: Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովը կը կազմուի նախագահին կողմէ նշանակուած երեք անդամներէ եւ խորհրդարանական խմբակցութիւններու մէկական ներկայացուցիչներէ: Հ. Յ. Պ. «Ազգային Միաբանութիւն»ը, «Օրինաց Երկիր»ը եւ Հանրապետական Կուսակցութիւնը չեն փոխան յանձնաժողովին մէջ իրենց ներկայացուցիչները, մինչ Միառնուած Աշխատանքային Կուսակցութիւնը պիտի նշանակէ իր նոր ներկայացուցիչը:

ՆԱԽԱԳԱԸ ԼԱՇՈՒՏ ԲԻԵԻ ՄԷՋ ՄԻՋԻՆ ԱՐԵԻԵԼԵԻ ՏԱԳՆԱՊԸ ԲՆՆԱՐԿԵՑ ՈՒՔՐԱՆԱՅԻ ԻՐ ՊԱՇՏՕՆԱԿԻՑԻՆ՝ ԲՈՒՉՄԱՅԻ ՇԵՏ

Նախագահ գործիչ Էմիլ Լաշուտ երէկ պաշտօնական երկրորդ այցելութեամբ մը մեկնեցաւ Ուքրանիա, ուր տեսակցութիւն մը ունեցաւ Ուքրանիոյ նախագահ Լէոնիտ Բուչնիչի հետ: Քննարկուածի առարկայ դարձան շրջանային եւ միջազգային հրատապ հարցեր, ինչպէս նաեւ Լիբանան - Ուքրանիա երկկողմանի յարաբերութեանց առնչուող խնդիրներ: Հանդիպումին ներկայ գտնուեցան փոխ վարչապետ Իսամ Ֆարէս եւ նախագահ Բուչնիչի արտաքին յարաբերութիւններու խորհրդակալը: Այս ժողովականներուն միացան լիբանանեան պատուիրակութիւնը եւ Ուքրանիոյ փոխ վարչապետն ու այլ չորս նախարարներ, որոնք Ֆարէսի հետ կնքեցին հինգ համաձայնագիրներ՝ արհեստագիտութեան, մշակոյթի, գրաստիպութեան եւ առողջապահութեան մարզերուն մէջ: Շարք՝ էջ 3




Հ. Յ. Պ. ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ՆԱԽԱԳԱՅ ԲՈՉԱՐԵԱՆԻ ՅԵՏ ԱՐԾԱՐԾԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՌՆՉՈՒՂ ՀԱՐՑԵՐ

Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեան երէկ ընդունեց Հ. Յ. Պ. պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ Հ. Յ. Պ. Բիրոյի ներկայացուցիչ ընկ. Հրանդ Մարգարեանի: Հ. Յ. Պ. պատուիրակութեան մաս կը կազմէին Հ. Յ. Պ. Բիրոյի անդամ եւ Հ. Յ. Պ. Հայ Դատի Կեդրոնական Խորհուրդի պատասխանատու ընկ. Կարօ Արմէնեան եւ Հ. Յ. Պ. Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ ընկ. Արմէն Ռուստամեան: Երկու ժամ տեւած հանդիպումին ընթացքին արծարծուեցան Հայաստանի ներքաղաքական իրավիճակը եւ արտաքին քաղաքականութեան վերաբերող հարցեր: Հանդիպումին ետք Հ. Յ. Պ. Բիրոյի ներկայացուցիչ ընկ. Հրանդ Մարգարեան գոհունակութիւն յայտնեց, նշելով, որ հանդիպումը ընթացած է փոխըմբռնման մթնոլորտի մէջ: Շարք՝ էջ 10

ԱՐԳԱՐԱ ԿՐԱՅ ԿԱՐԵՒՐ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԸ ԻՍՐԱՅԷԼԻ ԵՒ ԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ԲԱՐԵԼԱՄԱՆ ՄԷՋ

Կ'ԸՍԵ ՄՈՇԵ ԲԱՅՆԻ



Սեգեր կ'ընդունի Զացար

ԱՆԳԱՐԱ, 8 (ԱՅՓ).- Թուրքիա այցելող Իսրայէլի նախագահ Մոշէ Բացար Երեքշաբթի օր յայտնած է, թէ հարաւ կրնայ կարեւոր դերակատարութիւն ունենալ Իսրայէլի եւ արաբական երկիրներուն միջեւ յարաբերութեանց բարելաման մէջ, յատկապէս այնպիսի ժամանակներու մէջ, երբ յոյսեր կան պաղեստինեիսրայէլեան տագնապին աւարտին գծով:

Թուրքիոյ նախագահ Ահմէտ Նեմէթ Սեպերի հետ միացեալ մամլոյ ասուլիսի մը ընթացքին Բացար ըսած է, որ նկատի առած Թուրքիոյ դիրքը՝ շրջանին եւ աշխարհի մէջ, անիկա «կարեւոր մասնակցութիւն կրնայ բերել Իսրայէլի եւ արաբական երկիրներուն միջեւ յարաբերութեանց բնականոնացման»:

Թուրքիա եւ Իսրայէլ դաշնակից եղած են 1996էն ի վեր, երբ անոնք պինտորական համաձայնագիր մը կնքած էին, ինչ որ Իրանի եւ արաբական երկիրներու կողմէ խիստ քննադատութեան ցողովը բացած էին: Իսրայէլ եւ Թուրքիա կը պնդեն, որ իրենց գործակցութիւնը երրորդ կողմի մը դէմ չէ ուղղուած:

Սակայն իսրայէլեան արմատներ ունեցող Արդարութեան եւ Բարգաւաճման կուսակցութիւնը, որ անցեալ Նոյեմբերին Անգարայի մէջ իշխանութեան ղեկը ստանձնած էր, յայտարարած է, թէ կը ծրարէ գործօն կերպով հետապնդել իւր յարաբերութիւններ թէ՛ արաբական աշխարհին, թէ՛ Իսրայէլի հետ:

Անգարա նաեւ պաղեստինցիներուն հետ դիւանագիտական լիիրա կապեր ունի եւ առաջարկած է երկու կողմերուն միջեւ խաղաղարար բանակցութիւններ հիւրընկալել:

«Թուրքիա պատրաստ է որեւէ ձեւով մասնակցել երկու կողմերուն խաղաղութեան հաստատման ի խնդիր ճիգերուն, ներառեալ՝ խորհրդածողով մը հիւրընկալելու քայլը», ըսած է Սեպեր թղթակիցներու:

ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՇԵՏ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

Քացար մինչ այդ, շեշտած է, որ Միջին Արեւելքի մէջ իսկական խաղաղութիւնը եւ կայունութիւնը կարելի են ոչ միայն Իսրայէլի եւ պաղեստինցիներուն միջեւ խաղաղութեան, այլ նաեւ՝ Իսրայէլի եւ Սուրիոյ ու Լիբանանի հետ: «Սուրիոյ եւ Լիբանանի հետ կնքուելիք խաղաղութեան համաձայնագիրները շատ կարեւոր են անբողջ շրջանին եւ կայուն ու ապահով ապագայի մը համար», ըսած է ան: Այսուհանդերձ, յայտնած է ան, Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատ «առած է կարգ մը քայլեր, որոնք երկկողմանի հարցերուն թափ տուին», ըսած է ան, առանց մանրամասնութիւններ տալու:

ԱՊՊԱՍ ԶՆՋԵՑ ՇԱՐՈՆԻ ՀԵՏ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ, ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՆՈՐ ՏԱԳՆԱՊԻ ՄԸ ՄԱՏՆԵԼՈՎ

Պաղեստինցի վարչապետ Մահմուտ Ապպաս շնջեց իսրայէլացի պաշտօնակիցին՝ Արիէլ Շարոնի հետ նախատեսուած հանդիպում մը խաղաղութեան գործընթացը նոր տագնապի մը մատնելով: Ապպասի մտիկա աղբիւրներ հաղորդեցին, որ Շարոնը, էջ 3

ՕՂԱՆԱԻ ԱՀԱՒՈՐ ԱՐԿԱԾ ՄՈՒՏԱՆԻ ՄԷՋ. 115 ԶՈՎ

Երէկ Սուտանի մէջ ճամբորդատար օդանավ մը շախախտուեցաւ, պատճառելով 115 զոհ: Միայն մէկ հոգի փրկուած է՝ երկու տարեկան մանուկ մը: «Պոլին 737» տիպի օդանավը կը պատկանէր սուտանեան ազգային ընկերութեան: Ան թեքնիք խանգարում ունեցած է: Օդանաւի անձնակազմին 11 անդամները եւս զոհ գացած են:

ՕՍԿԱՆԵԱՆ ԿԱՆԴՐԱԴԱՌՆԱՅ ՀԱՅԵԻԹՈՒՐՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան երէկ Եւրոպական Խորհուրդի Հայաստանի տեղեկատուական գրասենեակի քաղաքացիական խորհուրդի հետ կարճատեւ հանդիպումի մը ընթացքին անդրադարձաւ հայ - թուրք յարաբերութիւններուն: «Երեւանը բազմաթիւ առաջարկներ ունի հայ - թուրքական յարաբերութիւններու բարելաման ուղղուած «փոքր քայլերով յառաջանալու» քաղաքականութեան ծիրէն ներս, նշեց Օսկանեան: Ան յուս յայտնեց, որ իր թուրք պաշտօնակիցին հետ յառաջիկայ Սեպտեմբերին կայանալիք իր երկրորդ հանդիպումին ընթացքին կողմերը կը յաջողին հասնիլ շոշափելի համաձայնութիւններու: Օսկանեանի համաձայն, Ապտիլյա Կիլիի հետ իր առաջին հանդիպումին ընթացքին համաձայնութիւն գոյացած է «յառաջանալ փոքր քայլերով»: «Սահմանի սահմաններէ փոքր քայլերով ծիրէն ներս ո՞ր հանգրուանին տեղի կ'ունենայ, դժուար է այս պահուն ճշդել: Սակայն պետք է հաստատեմ, որ ցանկութիւն կայ դրական վարձագումն արձանագրել հայ - թուրքական յարաբերութիւններուն մէջ», յայտնած է Օսկանեան: Ան դիտել տուած է, թէ պետք է սպասել յաջորդ հանդիպումին, տեսնելու համար, թէ «երկուստեք ինչպիսի՞ պատրաստակամութիւն կայ փոքր քայլերու հերթականութեան առումով»: «Հետեւաբար, ընդհանուր մթնոլորտը եւ կը գնահատեմ դրական, սակայն այն տպաւորութիւնը, որ ստեղծուեցաւ առաջին հանդիպումին ետք, չի համապատասխաներ իրականութեան», նկատել տուաւ Հայաստանի արտաքին գործոց նախարարը: Վարդան Օսկանեան Լեռնային Ղարաբաղի տագնապին առնչութեամբ Եւրոպական Խորհուրդի դիրքորոշման մասին հարցումի մը պատասխանելով ըսաւ, որ եթէ այդ կազմակերպութիւնը նպաստէ Լեռնային Ղարաբաղի բանակային կողմ դառնալուն, ապա Երեւան միայն կ'ողջունէ այդ քայլը, որովհետեւ անիկա կը համարուի Հայաստանի դիրքորոշումին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հայ - պրպեյճանական սահմանային գոտիին վրայ, Իջևանի մօտ, երէկ հանդիպում ունեցան Հայաստանի եւ Արաբիանի պաշտպանու թեան նախարարները՝ Սերժ Սարգսեան եւ Սաֆար Ապիե: Երկու երկիրներու ռազմական գերատեսչութիւնները քննարկեցին պիստոլի պահպանման ու սահմանային միջադէպերու կանխարգիլման առնչուող հարցեր: Լ. ՂԱՐԱՔԱՂԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒՆ ԿԸ ԶՈՒՄԱՅՆԵ ԱԶՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ԿՈՂՄԸ

ԱԿՆԱՐԿ

ԱՊԱՏԵՂԵԿԱՏՈՒԿԱՆ ՔԱՐՈՉԱՐՇԱՒ

Թուրքեւպրպեյճանական միացեալ քարոզչամեքենային համար ապատեղեկատուութիւնը ընթացիկ մարտավարութիւն է: Յերիւրանքի վրայ հիմնուած իրաքանչիւր լրատուութիւն պետք է դիտարկել տուեալ ժամանակի, ինչպէս նաեւ «տեղեկութեան» նախորդող է անմիջականօրէն յաջորդող դէպքերու ընդհանուր շրջափոխի մէջ:

Հերքելի է ետք Արաբիանի պաշտպանութեան նախարարութեան մամլոյ ծառայութեան հաղորդած լուրերը, Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը մեկնաբանական բաժինով մը կ'աւելցնէր, թէ չէ բացառուած այս լրատուութեան առնչութիւնը Արաբիանի նախագահական յառաջիկայ ընտրութիւններուն:

Արաբիանի պինտորական թէ քաղաքական պետական տեսանկերէ յայտարարուած ռազմատեսչ յայտարարութիւններուն համընկնող ապատեղեկատուութիւն է ռազմական գործողութիւններու վերաբան մասին Արաբիանի կատարած ապատեղեկատուութիւնը, որ միաժամանակ կը շահարկուի թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին մակարդակներու վրայ:

Հիմնուելով Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան տրամաբանութեան վրայ, ապատեղեկատուութիւնը ներքին կարգով վարկ կ'ապահովէ հայկական ռոտնագութիւնները կանխարգիլող Ալիե ընտանիքի նախագահական համաթեկնածութիւններուն, ապա, արտաքին ճակատի վրայ Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը կը ներկայացուին իբրեւ նախադրականներ, իբրեւ ռազմատեսչ Հանրապետութիւններ, որոնք ամէն առիթի պատրաստ են խախտելու պինտորական համաձայնութիւնը եւ բարձրացնելու Արաբիանի ամբողջականութեան գրաւեալ տարածքներու համեմատութիւնը...:

Պատմութեան նենգափոխումին արդէն երկար տեսնէ ի վեր աւելցած էր ժամանակակից դէպքերու խեղաթիւրման հետեւողական գործընթացը: Երեւոյթները մտածել կուտան, որ ակնատես պիտի ըլլանք ապատեղեկատուական քարոզարշաւի մարտավարական արագ կողոյթի մը, որ ամենայն հասանալիութեամբ պիտի շահարկուի առաջին հերթին Արաբիանի նախագահական յառաջիկայ ընտրութիւններուն համար:

«Ա.»

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ԵՒ ԱՐՏԵՐԿՐԻ ԼԻՔԱՆԱՆՑԻՆԵՐՈՒ ՀԱՐՑԵՐՈՒ ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ՔՆՆԱՐԿԵՑ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՏԱԳՆԱՊԸ

Արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու երեսփոխանական յանձնախումբը երէկ, գլխաւորութեամբ յանձնախումբի նախագահ երեսփոխան Ալի Նալիլի, գումարեց ժողով մը, որուն ներկայ գտնուեցան յանձնախումբին անդամ երեսփոխանները, ինչպէս նաեւ նախարարութեան քաղաքական հարցերու պատասխանատու Նաժի Ապի Ասի:

Յանձնախումբին կողմէ քննարկուած հիմնական թղթածրարը եղաւ միջին արեւելեան տագնապի լուծման համար պատրաստուած խաղաղութեան ճամբու քարտէսի գործադրութիւնը: Յանձնախումբը վստահեցուց, որ Լիբանանի եւ Սուրիոյ վրայ ամերիկեան վարչակազմին կողմէ բանեցուած ճնշումը երբեք պիտի չպահէ Լիբանանի եւ Սուրիոյ որդեգրած սկզբունքներուն, այսինքն՝ Մատրիտի դաշինքի գործադրութեան, արդար եւ ամբողջական խաղաղութեան կերտումին, ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի կողմէ տրուած միջազգային բանաձեւերու գործադրութեան, պաղեստինցի գաղթականներու տունդարձի իրաւունքին եւ բռնագրաւուած շրջերու ու հողերու ապատագրման համար դիմադրութիւնը:

1985Ի ԾՆՈՒՆԴՆԵՐԸ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԿԸ ԿԱՆՉՈՒԻՆ

Բանակի հրամանատարութիւնը երէկ հրապարակեց պաշտօնական հաղորդագրութիւն մը, որուն հիմամբ փնտրական ծառայութեան կանչեց 1985ի ծնունդները: Չինուորական ծառայութեան համար խնդրոյ առարկայ անձերը պէտք է ներկայանան համապատասխան ոստիկանատուններ, իրենց հետ ունենալով անհատական իւրաժառանգութիւն, թաղապետին կողմէ վաւերացուած անցագրի լուսանկար (4 x 4) եւ բնակարանի յատուկ արտօսագիր: Ոստիկանատուներն են հետեւեալները. - Ֆախրէտտին (Պէյրութ) Պէյրութի նահանգ: - Շուքրի Ղանէմ (Ֆիւրք) Լեռնալիբանան: - Ալ Քըպպէ (նախկին սպաներու բնակարաններ) Հիւսիս: - Մոհամէտ Չըղէյա (Սայտա) Հարաւ: - Ապու Սէյման (Ապլահ) Պէքաա:

ՄԱՀԱԶԴ

Տիար Մարգիս ձեռնհաս եւ զաւակները
Գէորգ, Մարլէն եւ Սանտրա
Տէր եւ տիկին Նազարէթ ձեռնհաս եւ զաւակունք
Տէր եւ տիկին Մարգար ձեռնհաս եւ զաւակունք
Տիկին Ալիս Պալմայան եւ զաւակունք
Տիկին Շնորհիկ Շիրիկեան եւ զաւակունք
Տիկին Երանուհի Գազանեան եւ զաւակունք
Տիար Ապտո Քարա եւ զաւակունք
Տիար Գրիգոր Վարդապետեան եւ զաւակունք
Տիկին Սիրան Փոյատեան եւ զաւակունք
եւ համայն ազգականները կը գուժեն իրենց կնոջ, մօր, քրոջ, հօրաքրոջ եւ հարազատին՝

ԱԼԻՍ ԾԵՐԷՃԵԱՆԻ (Ծնեալ՝ ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆ, 1947ԻԳ)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 6 Յուլիս 2003ին, երեկոյան ժամը 5:00ին, յետ երկարատեւ հիւանդութեան: Թաղման արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Չորեքշաբթի, 9 Յուլիս 2003ին, կէսօրէ առաջ ժամը 11:00ին Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատան մատրան մէջ:
●Ներկայիս ընդունիլ իբրեւ մահապղ:
●Յաւակցութիւնները պիտի ընդունուին նոյն օրը Ազգային գերեզմանատան մէջ:

ԱՅՆՃԱՐ ԱՅՆՃԱՐ ՄԱՀԱԶԴ

Տիար Պերճ Չըլտրեան եւ զաւակները Փոլ եւ Լիլիթ
Տէր եւ տիկին Պողոս Չըլտրեան
Տէր եւ տիկին Վարդան Գոշանեան եւ զաւակները
Յովիկ, Ժան, Սերժ եւ Մայք
Տէր եւ տիկին Բաֆֆի Գոշանեան
Տէր եւ տիկին Աւո Գոշանեան եւ զաւակը
Տէր եւ տիկին Մովսէս Չըլտրեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Սեւակ Չըլտրեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Մուրատ Տուտաբլեան եւ զաւակունք
Պր. Յովհաննէս Չըլտրեան
Տիկին Իսկուհի Տեմիրճեան
եւ համայն ազգականները կը գուժեն իրենց, կնոջ, մօր, աղջկան, քրոջ եւ հարազատին՝

ՄԱՆՈՒՇԱԿ ՉԸՏԸՐԵԱՆԻ (Ծնեալ՝ ԳՈՇԱՆԵԱՆ, 1969ԻԳ)

անակնկալ մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 8 Յուլիս 2003ին, առաւօտեան ժամը 6:00ին: Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Չորեքշաբթի, 9 Յուլիս, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Այնճարի Ս. Պողոս եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Այնճարի Ազգային գերեզմանատունը:
●Ներկայիս ընդունիլ իբրեւ մահապղ:
●Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Ռոմէյլ, Քուպէյիթ փողոց, «Ալյուս Հաուր» շէնք Հինգշաբթի 10 եւ Ուրբաթ 11 Յուլիսին:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԱՊԵՆՄԱՆ ՆԻՍՏԵՐ ՊԻՏԻ ԳՈՒՄԱՐԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի երէկ կող ուղղեց գումարեցու արտակարգ նիստեր յատկացուած կառավարութեան հարցապնդման, յառաջիկայ 15 Յուլիսին առաւօտեան ժամը 10:30ին: Առաջին հարցապնդումը պիտի ըլլայ երեսփոխան Նիքոլա Ֆաթթուշի կողմէ ներկայացուած հարցին մասին, որ կ'առնչուի կառավարութեան եւ նախարարութիւններուն կողմէ պետական շառքերի խորհուրդին կողմէ տրուած որոշումներուն անտեսմանը: Երկրորդ հարցապնդումը կը վերաբերի երեսփոխան Աքրամ Շըհաճյէ կողմէ ներկայացուած աղբերու հարցին: Պըրրի երէկ ընդունեց Լիբանանի մէջ շագարտատանի դեպքան Պաղտատ Ամարիէ վր, որուն հետ քննարկեց Լիբանան - շագարտատան երկկողմանի յարաբերութիւնները, ինչպէս նաեւ շրջանային իրադարձութիւնները: Պըրրի այցելուեց Էլ Էրանի մէջ Լիբանանի դեպքան Ատնան Մանսուր, Արաբական Միացեալ Էմիրութիւններու մէջ Լիբանանի դեպքան Հասան Պաթրուն, Կեդրոնական Գրամատան կառավարիչ Մոհամէտ Փաշի եւ արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Ժան Օպէյտ:

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԱՅՅԵԼՈՒՆԵՐԸ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ Քորայթէ մի մէջ ընդունեց երեսփոխան Ուաժիհ Պաարինին, որուն հետ քննարկեց տեղական եւ շրջանային իրադարձութիւնները: Հանդիպումն տեւեց Պաարինի յայտնեց, որ անհրաժեշտ է իրականացնել Աքքարի մէջ բարգաւաճման աշխատանքներն ու վերաշինութեան ծրագիրները: Ան ողջունեց իշխանութեան երեք պետերը, որոնք պարտաւորուած յայտնեցին Պաարինիին - Հըրմէլի եւ Աքքարի մէջ բարգաւաճման աշխատանքներն ու վերաշինութեան ծրագիրները: Ան ողջունեց իշխանութեան երեք պետերը, որոնք պարտաւորուած յայտնեցին Պաարինիին - Հըրմէլի եւ Աքքարի մէջ բարգաւաճման աշխատանքներն ու վերաշինութեան ծրագիրները: Պաարինի շեշտեց, որ պէտք է պահպանել լիբանանեւստիական անբաժանելի յարաբերութիւնները եւ հեռանալ բոլոր այն փորձերէն որոնց նպատակն է խախտել Լիբանան - Սուրիա երկկողմանի յարաբերութիւնները: Վարչապետ Հարիրի երէկ ընդունեց Լիբանանի մէջ Ֆրանսուա Պիլիքի Լը Քուրթիէն, որուն հետ քննարկեց Լիբանան - Ֆրանսա երկկողմանի յարաբերութիւնները: Վարչապետ Հարիրի այցելեց նաեւ Լիբանանի մէջ Միացեալ Միջուկային Էներճիի ղեկավար Վինսենթ Պէթլը, ընկերակցութեամբ ղեկավարուած գործակալար Բարոլ Քալիսի:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենեակը մեր յարգոյ ազգայիններուն կը յայտնէ, որ ամեն օր առաւօտեան ժամը 9:00էն կեսօրը ետք ժամը 5:00, իսկ Շաբաթ օրերը առաւօտեան ժամը 8:30էն 12:30, կ'ընդունի դիմումներ գանգազան նախարարութիւններու եւ պետական հաստատութիւններու կապուած որեւէ հարցի վերաբերեալ: Այսուհետեւ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովհաննէս ամեն Չորեքշաբթի, առաւօտեան ժամը 9:00էն 11:00 ներկայ պիտի ըլլայ Երեսփոխանական Գրասենեակ, «Շաղոյեան» կեդրոն, Բ. յարկ, ուր պիտի ընդունի քաղաքացիներուն դիմումները:

ՀԱՅՎԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՄԱՀԱԶԴ

Տոբթ. Համբարձում Գասպարեան
Տիար Կարապետ Գասպարեան
Օրդ. Արմինէ Գասպարեան
Տէր եւ տիկին Նաշիկ եւ Արսինէ Աբրահամեան
եւ զաւակը Գրիգոր
Տէր եւ տիկին Գրիգոր Կէօքճեան եւ դստերը
Օրդ. Վարդուհի Կէօքճեան
Տէր եւ տիկին Կարո Աբրահամեան
Պայթարեան ընտանիք
Վահրատեան ընտանիք
Չննդեան ընտանիք
եւ համայն ազգականները կը գուժեն իրենց քրոջ, մօրաքրոջ եւ հարազատին՝

ՄԱՎԼԻՆԸ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 7 Յուլիս 2003ին յետ երկարատեւ հիւանդութեան: Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Չորեքշաբթի, 9 Յուլիս 2003ին կէսօրէ ետք ժամը 2:00ին Էլ Էրանի մէջ Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:
●Ներկայիս ընդունիլ իբրեւ մահապղ:
●Յաւակցութիւնները կ'ընդունուին Ս. Յակոբ եկեղեցւոյ արահին մէջ, կէսօրէ ետք ժամը 2:00էն 7:00ը, Չորեքշաբթի 9 եւ Հինգշաբթի 10 Յուլիսին:
●Փոխան ծաղկեպսակի կը խնդրուի նուիրատուութիւն կատարել ՔԱՀԼԻ:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Արմէնուհի Գրաճեան
Տէր եւ տիկին Միսաք Գրաճեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Արիս Սողոմոնեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Պետրոս Պոյաճեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Մովսէս Թրթրեան
Գասպարեան ընտանիք
Իսկէնեան ընտանիք
Չրթիկեան ընտանիք
Թրթրեան ընտանիք
եւ համայն ազգականները կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, մօրեղբոր, անեղբոջ եւ հարազատին՝

ՆԱԶԱՐԷԹ ԳՐԱՃԵԱՆԻ (Ծնեալ՝ Պէյրուք, 1936ԻԳ)

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 8 Յուլիս 2003ին, կէսօրուան ժամը 12:00ին, Սըրհալ հիւանդանոցին մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան: Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Չորեքշաբթի, 9 Յուլիս, կէսօրէ ետք ժամը 1:00ին, Ռոմէյլի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Չըրճ Շըպպէթի Ազգային գերեզմանատունը:
●Ներկայիս ընդունիլ իբրեւ մահապղ:
●Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Ռոմէյլ, Քուպէյիթ փողոց, «Ալյուս Հաուր» շէնք Հինգշաբթի 10 եւ Ուրբաթ 11 Յուլիսին:

ԱԿՆԱՐԿ

ՄԻՋՆՈՐԴՈՒԹԻՒՆՆԸ ԱԼ ՈՒՆԻ ԻՐ ԱՆԳԻՐ ՕՐԵՆՔՆԵՐԸ

Թուրքիոյ նախագահ Ահմէտ Նեճմէթ Սեւէր երէկ իրաւախօս իր պաշտօնակիցին՝ Մոշէ Քաւալի հետ Անգարայի մէջ ունեցած հանդիպումին աւարտին ի շարք ալ յոյ թղթապետներու յայտնած է, թէ Թուրքիա պատրաստ է միջնորդելու Իսրայէլի եւ արաբական աշխարհի միջեւ յարաբերութեանց բարելաւման ի խնդիր:

Բնականաբար իբրեւ շրջանային նկատառելի ուժ, ինչպէս նաեւ թէ՛ Իսրայէլի եւ թէ՛ արաբական աշխարհին հետ սերտ կապեր ունեցող Թուրքիոյ առաջարկը ողջունելի կրնայ ըլլալ մասնաւոր եթէ անցնի խօսքի սահմանը: Սակայն նման առաջարկ մը երբ կու գայ երրորդ կողմէ մը, որ բոլորէն առաջ ինք կարիք ունի նմանօրինակ միջնորդութեան, ապա ի սկզբանէ կը մերկանայ տուեալ կողմին կեղծ ու ոչ հաստատի միջնորդ մը ըլլալու հանգամանքը:

Տրամաբանութեան տէր որեւէ անհատ բնականաբար ինքն իրեն հարց պիտի տայ հետեւեալը. եթէ Թուրքիա այդքա՛ն ստակ է այսպիսի բարդ տագնապի մը միջնորդելու, ինչո՞ւ չի փորձեր հարթել ի՛ր հարցերը, որոնք յար եւ նման են պաղեստինեւիսրայէլեան տագնապին: Հարկ կա՞յ յիշեցնելու անոր ուսերուն բեցուած կիպրական, քրտական եւ հայկական թղթածրարները:

Սեւէր եւ սեւէրներ փոխանակ յոխորտալու ու իրենց կարողութիւններէն շատ աւելի վեր հարցերու գծով շարժաբանութիւն ընելու, նախ եւ առաջ թող ձեռքապատին վերջ յիշուած իրենց հարցերէն, բարոյք լուծում մը գտնեն անոնց, եւ վերջը միայն մտածեն այլոց հարցերը լուծելու մասին: Ի վերջոյ միջնորդութեան համար կայ անգիր օրէնք մը, որուն համաձայն՝ նախապայման է օրինակելի ըլլալ, որպէսզի երկուստեք կողմերը ակնհայտան երրորդ կողմին: Իսկ այս պարագային ո՞ր օրինակելիութեան մասին է խօսքը, որ ակնհայտ արուի անոր:

Թրքական խարդաւանքներուն ծանօթ է աշխարհը այսօր աւելի քան չորս դարէ ի վեր: Թէ՛ Արեւմուտքը, թէ՛ Արեւելքը գործակցութեան ու յարաբերութեան ընդմէջէն լաւ ճանչցած են այլեւս թուրքը, որուն կարելի չէ վստահել ոչ մէկ ձեռով. ասոր փաստը ան վերջին անգամ տուաւ տակաւին նոր, իրաքեան տագնապի օրերուն:

Կիպրական, քրտական եւ հայկական հող բռնագրաւած, ցեղասպանութիւն գործադրած, Եւրոպայի դռները անյոյս թակող ու անոր առջեւ միայն սողացող եւ ընդմիջու մտրակցական Թուրքիա չի կրնար միջնորդել բռնագրաւուած հողերու իրաւատէր արար ժողովուրդին դատին համար, իսկ հակառակ պարագային անոր միջնորդութիւնը կրնայ ըլլալ լրիւ միակողմանի, անշուշտ ի նպաստ բռնագրաւողին ու շարդարարին:

ՀՐԱԶ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ASHJIAN TOURS

ՇՐՋԱՊՏՈՅՏՆԵՐ

1.- Յոյ Համահայկական խաղերու առիթով 17 - 31 ՕԳՈՍՏՈՍ ԵՐԵԱՆ, ԵՊՊԿԱՆՈՐ, ՍԵՆՈՎ 11 օր պտոյտներ, վիզան եւ օդակայանի տուրքը ներառեալ, փոխան 1100 \$ միայն 625\$ սկսեալ:

ASHJIAN TOURS 01 - 261177, 01 - 240654, 03 - 233978 եւ գիշերները՝ 01 - 258837:

ԼԻՔԱՆԱՆԻ ՔԵՍԱՊՏԻՆԵՐՈՒ ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆԻ ՄԻՈՒԹԻՒՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լիբանանի քեսապներու երիտասարդական յանձնախումբի կազմակերպած վիճակահանութեան շահող թիւերն են.

9 - 97 - 338

Balkan Holidays

TRANSLITEX TOURS

ԴԵՊԻ ՎԱՌՆԱ ՇՐՋԱՊՏՈՅՏՆԵՐՈՒ 36 ՏԱՐՈՒԱՆ ՓՈՐՉԱՌՈՒԹԻՒՆ

Varna Summer

245\$ սկսեալ

245\$ սկսեալ (ներառեալ շրջապտոյտին հիմնական ծախսերը)

Balkan Holidays

VARNA EXPERT NO. 1
Look after No. 1. Let No. 1 Look after you.
CORNICH MAZRAA WAKF ROOM CENTER - BANK AUDI
TEL.: 1/304553 - 304563 FAX: 9611/310424 BEIRUT - LEBANON

ԱՊՊԱՍ ԶԵՋԵՑ ԾԱՐՈՆԻ ՀԵՏ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ...


Ծարուակում Ա. Էջեց

Ռեգիստր, որ Ծարունի հետ այսօրուան հանդիպումը չընդունեցաւ, որովհետեւ Ապպաս դժգոհ է պաղեստինցի բանտարկեալներու արձակման գծով Իսրայէլի որդեգրած կեցուածքէն:

Ծարուն - Ապպաս նախատեսուած հանդիպումը, որ երկրորդը պիտի ըլլար մէկ շաբթուան մէջ, խաղաղութեան ճամբու քարտէսը յառաջիկայ շաբթի մէջ ղնելու յոյսեր կը ներշնչէր: Պաղեստինեան պաշտօնական աղբիւրներու համաձայն, հանդիպումը չընդունաւ որոշումը տրուեցաւ պաղեստինեան ղեկավարութեան հանդիպումի մը յոյսին տակ: Պաղեստինցի բարձրաստիճան պաշտօնատարներ Երկուշաբթի երեկոյեան հանդիպում մը ունեցած էին Ռամալլայի մէջ: Հանդիպումին նախագահած էր Եասէր Արաֆատ. ներկայ էր նաեւ Ապպաս: Պաշտօնական յայտարարութիւն մը կը նշէր, որ պաղեստինեան իշխանութիւնը կը պահանջէ, ապա արձակումը բոլոր բանտարկեալներուն, որոնց թիւը վեց հազարի կը հասնի: Իսրայէլ պատրաստակամութիւն յայտնած էր 350 բանտարկեալ ապա արձակելու: Յայտարարութիւնը կը նշէր նաեւ, որ պաղեստինեան ղեկավարութիւնը անընդունելի կը նկատէ Իսրայէլի կեցուածքը, որ քաղաքական արեւելումի հիմամբ դասակարգերու կը բաժնէ բանտարկեալները: Կարգ մը այլ աղբիւրներ յայտնեցին նաեւ, որ ղեկավարութեան անդամներ դժգոհութիւն յայտնած են Ապպասի որդեգրած չափաւորական կեցուածքին համար:

Իսրայէլի կառավարութեան բանբեր Աւի Փապնէր հաստատեց, որ պաղեստինցիները չընչած են Ծարունի հետ հանդիպումը: Սակայն Փապնէր մանրամասնութիւններ չփոխանցեց:

Պաղեստինեան կառավարութեան նախարարներէն՝ Նապիլ Ամր ըսաւ, որ հաւանաբար հանդիպումը այլ թուականի մը տեղի ունեցաւ: Ամր աւելցուց, որ իսրայէլացիներուն ըսուած է, թէ Ապպաս կ'ուզէ աւելի ուշ կայացնել հանդիպումը:



Ապպաս

մին դէմ:

Իսլամական ժիհադի ղեկավար Մոհամէտ Հինտի ըսաւ, որ տակաւին չէ հաստատուած, թէ ո՛վ հրապարակած է յայտարարութիւնը: Ան աւելցուց, սակայն, որ Իսլամական ժիհադ յանձնառու կը մնայ եռամսեայ պինդադրուի:

● <ԱՄՄՍԻ մէկ բանբերը յայտնեց, որ իսլամական շարժումը պատրաստ չէ Կինաթափ ըլլալու: Բանբերը աւելցուց, որ Համաս վար պիտի չառնէ Կինաթափը, այնքան ատեն որ իսրայէլեան գրաւումը կը շարունակուի:

● ՌՈՒՍԻՈՅ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով եւ անոր ֆրանսացի պաշտօնակիցը՝ Տոմիսլիւք տը Կիլիքէն կոչ ուղղեցին միջազգային խորհրդածողովի մը, որ պէտք է քննարկէ Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը:

ՆԱԽԱԳԱՇ ԼԱՇՈՒՏ ԲԻԵԻ ՄԵՋ...

Ծարուակում Ա. Էջեց

գործակցութեան վերաբերեալ:

Հանդիպումէն ետք նախագահներ Լաճուտ եւ Քուլճմա տուին մամուլի միացեալ ասուլիս մը, որուն ընթացքին շեշտեցին, որ կը բաժնեն նոյն կեցուածքները Միջին Արեւելքի իրադարձութեանց շուրջ:

Քուլճմա ընդգծեց, որ Միջին Արեւելքի մէջ խաղաղութեան եւ կարգի վերականգնման անհրաժեշտութիւնը զգալի է եւ հարկ է գալիս ձեռք ձգել ամէն զնով: Ան նկատեց, որ խաղաղութեան գործընթացի իրեն սկզբնական կարելի է նկատի ունենալ խաղաղութեան ճամբու քարտէսի գործադրութիւնը:

Քուլճմա դիտել տուաւ, որ Ուքրանիա կը ցանկանայ տեսնել անկախ Պաղեստին մը՝ ազգային ինքնիշխան կառավարութեամբ: Ան

աւելցուց, որ Միջին Արեւելքի տագնապի վերջնական եւ արդար լուծման կարելի չէ հասնի եթէ նկատի չառնուին նաեւ Լիբանանն ու Սուրիան, չկաշանան բոլոր կողմերուն միջեւ բանակցութիւններ եւ չգործադրուին ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի բանաձեւերը:

Նախագահ Լաճուտ իր կարգին յայտնեց, որ Լիբանան կը հաւատայ բանակցութեանց ճամբով եւ ոչ բռնի ուժով լուծելու միջին արեւելեան տագնապը: Ան աւելցուց նաեւ, որ խաղաղութեան գործընթացը պէտք է յանգի արդար եւ ամբողջական խաղաղութեան, որպէսզի կարելի ըլլայ Միջին Արեւելքի տագնապը վերջնականապէս լուծուած նկատել:

Նախագահներ Լաճուտ եւ Քուլճմա միասնաբար ընդգծեցին Լիբանան - Ուքրանիա գործակցութեան կարեւորութիւնը, նկատել տալով, որ Ֆարէսի հանդիպումը ուքրանացի իր պաշտօնակիցին հետ պիտի արդիւնաւորուի նշեալ գործակցութեան յստակ ծրագրի մը ճշդումով:

Նախագահ Լաճուտ Քիւեի իր կեցութեան վայրին մէջ ընդունեց նաեւ Ուքրանիոյ վարչապետ Վիթթոր Եանչուկիւի այցելութիւնը: Քննարկումի մասեր կայ դարձան լիբանան եւ Ուքրանիան առեւտրական կապերը ամրապնդելու անհրաժեշտութիւնը եւ տնտեսական մարզէն ներս ներդրումներ կատարելու կարեւորութիւնը:

Նախագահ Լաճուտ այցելեց նաեւ «Անձանօթ Զինուոր» յուշարձանը, ուր գետեղեց ծաղկեպսակ մը:

ԲԱՆԵՏԱՒՈՐՈՒԾ
Տըր եւ տիկին Մետրոպ եւ Այտա Բենտիրճեան բախտաւորուած են մանչ զաւակով մը՝ **ԿԻԳԵՆ**
8 Յուլիս 2003ին

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԺԻՒՏԱՅ ԿԸ ՍՏԱՆՁՆԵ ԹԵՒ ԱՄԻԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՆԱՆԱՏՈՒԹԻՒՆԸ

Իսլամական ժիհադի մէկ թելը երէկ հրապարակեց յայտարարութիւն մը՝ ստանձնելու համար պատասխանատուութիւնը Երկուշաբթի գիշեր, ԹԷՂ Աւիի մէջ տեղի ունեցած յարձակումին: Յայտարարութիւնը կը նշէր, որ ԹԷՂ Աւիի մէկ բնակարանին դէմ ուժեղացող իր հեղինակն էր 22ամեայ Ահմէտ Եահիա:

Ծարժումին բանբերը ըսաւ, որ ԹԷՂ Աւիի անձնասպանական գործողութիւնը տեղի ունեցած էր, իբրեւ հակադարձութիւն բոլոր բանտարկեալները ապա արձակելու Իսրայէլի որոշումը:

ԱՐՅԱՆԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՖՈՆԾԻՆ

● Բաֆֆի Գուխաճեան ընդ Ռոզալիմ Էտօլկերեան ամուսնութեան ուրախ առիթով, Տըր եւ տիկին Անդրանիկ Խտրոլարեան 100\$

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ» «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»
ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ ՀԱՄԱՔՈՂ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐՈՒ ԿԱՐԻՔ
«Վանայ Զայն» կարիքը ունի ծանուցումներ հաւաքող ներկայանալի երիտասարդուհիներու եւ երիտասարդներու, որոնք պիտի աշխատին շահաբաժնի դրութեամբ: Հայերէնի կողքին ֆրանսերէն կամ անգլերէն եւ արաբերէն գիտնալը պայման է:
Կը խնդրուի անձամբ ներկայանալ «Վանայ Զայն»:

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ» ԷՆ ՀԵՏԵՒԵՅԷՔ «ԱՍՏՂԱՀՈՅԼ» ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻՆ
Հինգշաբթի, 10 Յուլիս 2003, կէսօրէ ետք ժամը 5:00ին «Աստղահոյլ»ը նուիրուած է ազգագրագետ, յորինող, մտաւորական, երաժիշտ եւ խմբավար՝

ԱԼԵՔՍԱՆ ՄՆԱԿԵԱՆԻ
Իրենց յուշերը կը պատմեն Համազգայինի «Քնար» պարախումբի նախկին պարուսոյց
ՏԻԿԻՆ ԳԱՐԻՆԱ ԱԼԵՔՍԱՆՏՐԵԱՆ
Լիբանանցի մեծ յորինող
ՄԱՆՍՈՒՐ ՌԱՀՊԱՆԻ
Հաղորդաշարի խմբագիր՝ Ա. ԱՊՏԱԼԵԱՆ Պրպտուսներ՝ տիկին Ը. ԲԱՏՈՅԵԱՆ
Մի՛ մոռնաք ունկնդրելու «Աստղահոյլ»ը:

ASHJIAN TOURS
ԵՐԶԱՊՏՈՅՏՆԵՐ ԲԱՅԱՌԻԿ ԳԻՆ
2- Երիտասարդական բացառիկ վայելքի շաբաթ մը VARNԱ, 30 ՅՈՒԼԻՍԵՆ 6 ՕԳՈՍՏՈՍ, պանդոկ նախաճաշ, օդանաւի տոմսակը փոխան 385 \$ միայն 250 \$:

السفير | النصار | الزبير | المستقبل | البيرق | الحجارة | التخليق

8 Յուլիսի թիով տեղական մամուլը յուսարձակի տակ առած է Գահիրէի մէջ նախագահներ Ասատի եւ Մուպարաֆի հանդիպումը, Թեհրանի մէջ միջամաքամասային Շահապ - 3 հրթիռի փորձառնումը, իսրայէլեան բանտերուն մէջ գտնուող գերիներու ապա արձակման պաղեստինցիներուն պահանջը եւ իսրայէլեան հակադարձութիւնը:
«Նահար» օրաթերթը գրած է, թէ Ասատ եւ Մուպարաֆ քառանկյան յանձնարումքէն պահանջեցին Սուրիան եւ Լիբանանը եւս ներառել խաղաղութեան քարտէսին մէջ: Ըստ թերթին, Գամասկոս Գահիրէէն պահանջեց Ուաշինկթընի մօտ միջամտութիւն կատարել:
«Քիֆահ Արապի» նշած է, թէ երկու նախագահները շեշտը դրին Պաղեստինի եւ Իրաքի մէջ բռնագրաւումներուն վերջ տալու անհրաժեշտութեան վրայ:
Իրանի մէջ Շահապ - 3 հրթիռի փորձառնումին մասին «Տիար» գրած է, թէ Թեհրան կը շարունակէ մերժել քննութիւնները, եւ Շահապ - 3 իրանեան հրթիռը յաջողութեամբ փորձառնելով սարսափի կը մատնէ Իսրայէլը:

«Սաֆիր»ի համաձայն, Իսրայէլ եւ Միացեալ Նահանգներ անմիջականօրէն իրենց մտահոգութիւնը կը յայտնեն, իսկ Իրան ի գործ կը դնէ իր Շահապ - 3 հրթիռները:
Ըստ «Լիուա»ի, ԹԷՂ Աւի մտահոգ է, իսկ Ուաշինկթըն կոչ կ'ուղղէ վտանգին առաջը առնել, հակառակ այս իրողութեան, Իրան կը փորձակէ իր հրթիռը:

Պաղեստինեան հարցին ու անոր պարզացումներուն մասին «Նահար» գրած է, թէ Իսրայէլի մէջ անորոշ պատճառներով երկու անձեր սպանուած են, իսկ պաղեստինեան իսրայէլեան հանդիպումները կ'աշխուժանան: Ըստ «Սաֆիր»ի, գերիները հացադուլի կը դիմեն, իսկ իշխանութիւնը կը մերժէ անոնց ապա արձակման համար դրուած պայմանները:
«Քիֆահ Արապի» նշած է, թէ Իսրայէլ Ապպասն ու Տահլանը իրաւիքը Քնեսէթի մէջ երեսփոխաններուն հետ հանդիպումներ ունենալու:
«Անուար» գրած է, թէ պաղեստինցի հազարաւոր գերիներ հացադուլի կը դիմեն եւ կը պահանջեն իրենց իրաւունքները:
Ըստ «Լիուա»ի, Այսրոյրդանանի մէջ ձերբակալութիւններն ու բռնարարքները կը շարունակուին, իսկ եգիպտական պատուիրակութիւն մը մեկնեցաւ շրջան համաձայնութիւնն ու անոր գործադրութիւնը ամրապնդելու համար: Պաղեստինեան իսրայէլեան հանդիպումները կը շարունակուին եւ յանձնարումք մը կը յառաջանայ՝ «բռնութիւններու հրահրումը» կասեցնելու համար:
«Տիար» դիտել տուած է, թէ պաղեստինեան ապահովական ուժերը հարցաքննեցին Կապալի մէջ անձնասպանական գործողութեան փորձ կատարող մը:

«Նահար» գրած է, թէ պաղեստինցիներն ու իսրայէլացիները հանդիպումներ կ'ունենան խաղաղութեան քարտէսի գործադրութիւնը հետապնդելու համար, իսկ Ծարունի կառավարութիւնը կը փորձէ որոշ բանախոսութիւններ կատարել ամերիկեան ճնշումին տակ:

Իրաքեան իրադարձութիւններուն կնիարկելով «Սաֆիր» գրած է, թէ Պաղեստին եւ Սաժաֆի խորհուրդները գումարեցին իրենց առաջին ժողովները եւ ամերիկացիներէն պահանջեց շուտով վերաշինութեան աշխատանքներուն սկսելու:

Ըստ թերթին, Բրիտանիոյ կառավարութիւնը Սի. Այ. Էյ.էն կը պահանջէ ներդրութիւն խնդրել եւ անկա Պլէրը ապա կը կացուցէ իրեն ուղղուած խեղափոխութիւններ կատարելու անհրաժեշտութիւնը: Պլէր սակայն անբաստանեղեցաւ՝ չափապանցութիւններ կատարելու յանցանքին համար:

«Անուար»ի համաձայն, ամերիկեան պատասխանատուներ յայտնած են, թէ ամերիկացիները կողոպտեցին Պաղեստին օդակայանը, վայն գրաւելի է տքը:

Ըստ թերթին, ներկայիս Պաղեստին մէջ գտնուող ամերիկեան պինտորները Սատտամի պալատները հանգստարաններու եւ վայելքի վայրերու կը վերածեն:

«Նահար» գրած է, թէ Հըքայլըմ շեշտը կը դնէ ՄԱԿի դերակատարութեան անհրաժեշտութեան վրայ: Պաղեստին մէջ երկու ամերիկացի պինտորներ սպանուեցան եւ չորս ուրիշներ վիրաւորուեցան: Ֆրէնքս կը բացատրէ յաւելեալ պինտորներու անհրաժեշտութիւնը:

Այլ յուրերու կարգին «Քիֆահ Արապի» գրած է, թէ Պուշի Ափրիկէ այցելութեան նախօրեակին նախագահ Քապաֆի յայտարարեց, թէ ափրիկեցիք կը մերժեն արեւմուտքէն որեւէ միջամտութիւն ցամաքամասի հարցերուն մէջ:

«Անուար»ի համաձայն, ամերիկեան պինտորական խումբեր հասան Մոնրոպիա, Պուշի շրջապատյալի նախօրեակին:

Ըստ թերթին, Թուրքիոյ բանակի ղեկավարներէն մէկը ըսած է, թէ 11 քուրդ պինտորներու ձերբակալութիւնը վստահութեան հարց ստեղծած էր Թուրքիոյ եւ Միացեալ Նահանգներուն միջեւ:

Հ. Յ. Գ. «ԱՉԱՍԱՄԱՐՏ» ԱՎՈՒՄԲ
ԱՍԱՌՆԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔ
ՖՈՒԹՊՈԼ ՓԻՆԿ ՓՈՆԿ
ՊԱՍԷԹԾ ՃԱՏՐԱԿ
KUNG FU YOGA
● Արձանագրութեան համար մինչեւ 14 Յուլիս 2003
Դիմել՝ 6 - 12 տարեկան 03 - 657843
12 - 18 տարեկան 03 - 653386
● Բացի փորձերէն, այլապէս ալ կարելի է օգտուիլ մարզավայրէն:
Շտաբըրըուողները կրնան դիմել ակումբի մարզական յանձնախումբին:
Շեռ. 03 - 657843 եւ կամ ուղղակի ակումբ՝ 01 - 449924

ԷՀԼԱՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԵԴՐՈՆ ՌԱՌԵՏԱ (01 - 689381)
ՄԱՆԿԱ - ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՂՈՒԹԻՒՆԵՐ
ՄԱՆԿԱՊԱՐՏԻՉ - ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ
ԵՒ ՊԸՐԷՎԷԻ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒ
Պոտյոններ, ձեռային, մտային աշխատանքներ եւ խաղեր, մարզանք, ընդհանուր զարգացում, մրցումներ, լեզուներ, գիտութեան եւ թուաբանութեան դասեր, թատրոն, երաժշտութիւն:
Տեղողութիւն +14 Յուլիսէն 5 Սեպտեմբեր 2003
Ժամանակացոյց + կէսօրէ առաջ ժամը 9:00էն 1:00 եւ կէսօրէ ետք
Սկզբնաւորութիւն +14 Յուլիս Երկուշաբթի, ժամը 9:00ին
Արձանագրութիւն + 7Ը 12 Յուլիս
Կրթաթոշակ + 30,000 լ.ո. միայն
ՅԱՏՈՒԿ ՊԱՏԱՆԵԿԱՆ ԽՄԲԱՅԻՆ ՊԱՇԷՐ, ԶԱՐԳՅՈՒՄ, ՊՏՈՅՏ, ԽԱՂԵՐ ԿԵՍՈՐԵ ԵՏՔ ԺԱՄԸ 3:00ԷՆ 6:00
ՏՅՈՐԵՆՈՒԹԻՒՆ

ԱՐԶԱԳԱՆԳ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԵԱՆ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈՒԷՃԻ ՏԱՐԵԿԱՆ ՆՈՒԱԳԱՀԱՆԳԵՍԸ ԵՐԱԺՇՏԱՍԵՐԻՆ ՀԱՅԵԱՅՔՈՎ

Համազգայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլեճը ներկայացուց տարեկան հաշուետու համերգը, Ուրբաթ, 4 Յուլիս 2003ի երեկոյեան, Սէն Ժոզէֆ համայնարանի «Փիեռ Ապու Նաթի» սրահին մէջ: Ներկայ եղան ծնողներ եւ հրաւիրեալներ: «Ազգակ» արձագանգեց ձեռնարկին՝ 5 Յուլիս 2003ի իր համարով: Իրբեւ զաղուծաճալ կարեւոր իրադարձութիւն՝ կ'ուզենք անդրադառնալ գեղարուեստական ու մշակութային մեր կեանքը թրամացնող իւրայատուկ այս կառույցին հետզհետէ նոր նուաճումներ արձանագրող գերակատարութեան:

Ամենայն հրճուանքով ներկայ կ'ըլլանք Համազգայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլեճի կիսամեայ թէ ամսվերջի աշակերտական ունկնդրութեան ձեռնարկներուն, քոլեճի սրահին մէջ թէ Յրանապական համայնարանի «Փիեռ Ապու Նաթի» սրահին մէջ: Ակնարկելով 4 Յուլիս 2003ի երեկոյեան ամսվերջի հանդիսութեան եւ շրջանաւարտներու վկայականներու բաշխման հանդիսութեան՝ մեր ուրախութիւնը կրկնապատկուեցան անգամ մը եւս, ի տես տաղանդաւոր ու շնորհալի սերունդին ղէպի վերելքը ընծիւղման: Դաշնակ, ջութակ, թավուլ, սրինգ, երգ եղան գործիքները եւ միջոցները, որով արտայայտուեցան՝ թրամատի այս սերունդին ներկայացուցիչները, ոմանք՝ գերազանց նուաճումներով:

31 փոքրիկ ու շրջանաւարտ երաժիշտներ զարմացուցին, հիացուցին ներկաները, որոնց ծափահարութիւնները եղան ջերմ ու սրտաբուխ:

Ակներեւ է քոլեճի տնօրէնութեան, պատասխանատուներուն, Մնոգակա խորհուրդին, Համազգայինի Երջանային Վարչութեան եւ ուսուցիչներու հոգածութիւնը, գործընկերներն ու յարատեւ ջանքերը, նորագոյն սերունդի մեր շնորհալիները քաջաբերու, զանոնք բարձրացնելու արուեստի բարձր մակարդակի, որով կարելի պիտի ըլլայ մուտք գործել ղէպի միջազգային արուեստի բեմ:

31 երկսեռ նուագողներ ներկայացան հանրութեան, «Հալի» տուին հրապարակաւ, թէ իրենց հետեւողական ջանքերը ինչպիսի՞ մակարդակի բարձրացած էին, որքանո՞վ արժանացած էին գնահատանքի:

Սրահին մէջ Համերգային հանդիսութեան հետեւողները նախ ծափահարեցին երեք շրջանաւարտներ Սիրվարդ Պոյանեանի, Մովսէս Մկրտիչեանի եւ Նարեկ Տեմրճեանի (թավուլ) սքանչելի նուագածութիւնը, որով անոնք արժանացան ունկնդիրներու ջերմ ծափերուն: Անոնք կ'արժանանային գերազանց ու շատ լաւ յիշատակութեանց:

Այս ձեռնարկին ընթացքին հանդէս եկան նաեւ տարեկան ընթացքին մրցումներու մասնակցած քոլեճի աշակերտները, որոնք արժանացած էին ոսկի եւ արծաթ մետալներու: Անոնք եւս նուագեցին հերթով ու արժանացան ծափերու:

Ուժ նուագ՝ ուժ շրջանաւարտ թէ մրցանակաւոր աշակերտներու կողմէ մեկնաբանուած: Սա ինքնին համերգ մը կը նշանակէ, նուագահանդէս մը, որուն եթէ միանային քոլեճի վերի կարգերու 5 - 6 յառաջողմ աշակերտները, ներկայ երաժշտասէր հասարակութիւնը առաւել ու անխառն վայելքով պիտի հետեւէր երաժշտական այս գունագեղ համերգային հանդիսութեան: Գերազանցներն ու լաւագոյնները հարկ է անջատուին ոչ թէ սկսնակները ստորագնահատելու, այլ առաւել հաճոյքով ըմբոշանելու քոլեճին ընթացքը աւարտած տարանդաւորները, որպէսզի հապճեպ կամ անհամբեր տրամադրութեան վիճակ մը չստեղծուէր, ինչպէս եղան այդ երեկոյ... Յայտագիրի սկիզբի բաժինը, ոմանք ղիմեցին մեկնումի աճապարանքին, տրուած ըլլալով, որ երկար շարք մը կար նուագողներու: Հետեւաբար այսպիսի լուրջ ձեռնարկներ պէտք է անջատել՝ համերգին բարձր ընթանալուն եւ նոյն ատեն նման բացառիկ ժամերը անխոցելի տրամադրութեամբ ըմբոշանելու: Ի վերջոյ, սա արուեստի զգացողութիւն է, որ չի հանդուրժեր արտորանքի, ձանձրոյթի եւ սրահին կիսաւարտ հեռացող ոտնաձայներու: Յոյսուանք, որ մեր նկատողութիւնը կը լսուի յօգուտ յառաջիկայի համերգներու:

Այս ակնարկը կատարեցինք, որովհետեւ «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլեճը հասած է նախանձելի մակարդակի, ու հարկ է զայն պահել ամենայն նախանձախնդրութեամբ, գործընկերներով:

ՇԱՀԱՆԳՈՒՄՏ

ASHJIAN TOURS
3.- Հայաստան երբ ու դարձի տոնակ ARMAVIA Air Linesով Հայկէմ միայն 225 \$:
ASHJIAN TOURS 01 - 261177, 01 - 240654, 03 - 233978 եւ գիշերները՝ 01 - 258887:

«ԱԶԳԱԿ»Ի ՄԵՋ ԾԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐ
Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի սէշ որբէ՛ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանումը հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՐ 5:00:
ՄԱՀԱԶԳԱՆԵՐԸ բացառութիւնն է: Մահագը կ'ընդունուի միւնչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակուի հնարարութիւն կայ:

ՀԱՅՐԵՆԻ ՄՆԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔ

ՌԱՅԱՅԵԼ ԴԱԶԱՆՉԵԱՆԻ «ՀԱՅՐԱԿԱՆ ԶԵՌԱԳԻՐ» ԳԻՐՔԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ

Վերջերս Հայաստանի Գրողներու Տան մէջ տեղի ունեցաւ արձակագիր Ռաֆայէլ Դազանչեանի «Հայրապետի շնորհաճանդէս» ու բննարկումը: Գիրքին մէջ ընդգրկուած են Հայկական Յեղասպանութեան ու գոյամարտին ներքին փաստագրական - վաւերագրական նոյնանուն վիճակ մը եւ իրական ղէպերը, իրադարձութիւնները հիման վրայ գրուած պատմութեանը:

«Տարիներու ընթացքին լուսահոգի ծնողներուս, արեւնակից - հարապատներուս, Յեղասպանութեանէն փրկուած եւ վերապրող հայրենակիցներուս պատմածներու, յիշողութիւններու եւ ազգայատուներու տպաւորութիւններուն տակ, սերընդային պարտաւորութեան ներքին մղումով ներկայացուցի այս գրուածները իրբեւ կորուսեալ տարածքներու նկատմամբ մեծ կարօտի առհաստիչեայ», գիրքին մասին խօսելով նշեց Ռ. Դազանչեան:

ԱՐԵՒՅԱՍ ԱՄԱԳԵԱՆԻ ՍՏԵՂԾՎՈՐԾԱԿԱՆ ԵՐԵՎԱՆ

Աւետիք Իսահակեանի անուն գրադարանին մէջ տեղի ունեցաւ բանաստեղծ, հրապարակախօս եւ գեղանկարիչ Արեւշատ Աւագեանի ստեղծագործական երեկոն:

Հայաստանի Գրողներու Միութեան քարտուղար Յովիկ Յովեան խօսելով Ա. Աւագեանի ստեղծագործական հաւատամքին մասին՝ ըսաւ, որ «ան Հայաստանի պատմութեան ներկայի եւ ապագայի, անոր վառ գոյններուն ու մտքառող լոյսերուն երկինքն է»:

Արուեստաղէտ բարձր գնահատուած է նաեւ Համօ Սահեանի կողմէ: Վեր-

ջինիս համաձայն, «Ա. Աւագեան բացառիկ տաղանով օժտուած գեղանկարիչ է բանաստեղծութեան մէջ»:
Այս առիթով խօսք առաւ նաեւ Մ. Արեղեանի անուն գրականութեան հիմնարկի գիտական քարտուղար եւ գրականագէտ Մարկարիթա Նաչատրեան:
Ա. Աւագեան շուրջ 10 գիրքերու հեղինակ է, իսկ անոր գեղանկարները ցուցադրուած են ինչպէս Հայաստանի, նոյնպէս այլ աշխարհի բազմաթիւ երկիրներու մէջ:

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓԱՌԱՍՕՆ

Հայաստանի Գրողներու Միութեան Տան մէջ տեղի ունեցաւ հեղինակային բանաստեղծութեան հանրապետական փոխատու, որ նպատակ ունէր երիտասարդ ստեղծագործողներուն ձայնը հասցնել

ՅՐԱՆԱԿԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԵԳՐՈՒ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԵՋ

Վերջերս Երեւանի Պետական համալսարանի ռոմանոգերմանական բանասիրութեան բաժանում ունեցին մէջ Յրանայի ղեկավար Հանրի Քիւնի Ֆրանսագիտական ուսումնասիրութիւններու նորաստեղծ կեդրոնին նորահաստից ֆրանսական գրականութեան եւ լեզուագիտութեան վերաբերեալ 100 գիրքեր:

Երեւանի Պետական համալսարանի միջազգային կապերու գծով փոխնախագահ Աւետիսեան նշեց, որ Ֆրանսայի ղեկավարին համալսարան տուած իւրաքանչիւր այցելութիւն կը յատկանշուի գեղեցիկ միջոցառումով: Փոխնախագահը անդրադարձաւ նաեւ հայ-ֆրանսական բազմաբնոյթ կապերուն

Երեւանի Պետական համալսարանի լրատուական ծառայութիւնները յայտնեցին, որ ֆրանսագիտական ուսումնասիրութիւններու կեդրոնին ստեղծման աշխատանքները պիտի աւարտին Օգոստոս ամսուն, իսկ 1 Սեպտեմբերին անիկա իր դռները պիտի բանայ ուսանողներուն առջեւ: Կեդրոնը պիտի գործէ ռոմանական բանասիրութեան ամպիոնին կողքին, օժտուած պիտի ըլլայ արդիական սարքերով, ինչպէս նաեւ համացանցով կապուած պիտի ըլլայ Ֆրանսայի համալսարաններուն եւ գիտական այլ կիցողներու հետ:

ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԵԱՆ ԵՒ ԶՄՄԱՌՈՒ ՎԱՆՔԻ ԳԱՆՁԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ



«Պայծառակերպութիւնը Զրիստոսի», Չմմառու վանքի ձեռագիրներու հաւաքածոյ, Աւետարան թիւ 22, պատրաստուած՝ Գաղատիա, 1670ին:

Հինգշաբթի, 3 Յուլիսի երեկոյեան ժամը 8:00ին, Հայ կաթողիկէ Միութեան «Արարտեան» սրահին մէջ տեղի ունեցաւ դասախօսական երեկոյ մը նուիրուած Հայ մանրանկարչական արուեստին, հովանաւորութեամբ Հայ կաթողիկէ ներսէս - Պետրոս ԺԹ. պատրիարքին եւ կազմակերպութեամբ Հայ կաթողիկէ Համալսարանական Միութեան մշակութային յանձնախումբին:

Առաջին դասախօսն էր Քաթարին Զրեան, որ ներկայացուց Հայկական մանրանկարչութեան պատմութիւնը: Ան անդրադարձաւ սկզբնական, կլիկիկեան (հայկական մանրանկարչութեան ոսկեդարը), յետկլիկիկեան ժամանակաշրջանի եւ զաղուծալի կեանքի (14էն 18րդ դար) հայկական մանրանկարչութեան առանձնայատկութիւններուն՝ բուսական երկար խօսելով միաժամանակ մանրանկարչութեան դպրոցներու եւ մանրանկարիչներու արուեստի հասկացողութեան եւ անոնց կրած ազդեցութիւններուն մասին:

Այնուհետեւ գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր, որուն ընթացքին Սոնա Փամպուքեան կատարեց երկու հոգեւոր երգեր: Վերջին դասախօսն էր Զմմառու վանքի մատենադարանի տնօրէն Հայր Վարդան վրդ. Գազանճեան, որ բաւական երկար բացատրութիւններ տուաւ Զմմառու վանքին մէջ գտնուող ձեռագիր մատենաներուն եւ գանձերուն մասին: Վարդապետը Զմմառու վանքի մատենադարանի գանձերը բաժնեց երկու զլխաւոր հաւաքածոներու՝ Այտնոնեան միաբանութեան ձեռագիրներու հաւաքածոյ եւ Զմմառու վանքի ձեռագիրներուն հաւաքածոյ: Վարդան վրդ. Գազանճեան այս երկու հաւաքածոներէն օրինակներ նշեց, եւ մասնաւորաբար կեդրոնացաւ Զմմառու վանքի հաւաքածոյէն առնուած Գրիստոսի պայծառակերպութեան նուիրուած մէկ մանրանկարին մանրամասնութիւններուն վրայ:

Երկու դասախօսներուն բացատրութիւններուն կ'ընկերանար սահիկներու ցուցադրութիւն:

Հ. ԱՒԵՏ. ԿԵԳՐՈՒՆԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՎԱՐՄԱՐՍՆ

Աստուծոյ պալիւնով՝ 2003 - 2004 տարեշրջանի սկզբնական արձանագրութիւնները, նախկին եւ նոր աշակերտներու համար, սկսած են կը շարունակուին մինչեւ 31 Յուլիս 2003, ամէն օր առաւօտեան ժամը 8:30էն 1:00 (բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն): Օգոստոս ամսուան ընթացքին գրասենեակը բաց է միայն Չորեքշաբթի օրերը ժամը 8:30էն 12:00:

Նորից աշակերտներն կը պիտանջուի՝ ա.- Վերջին երկու տարուան վիճակացոյցը բ.- Ինքնուրեք թուրք լուսապատճէն գ.- Երկու նոր լուսանկար դ.- Բարի վարուց վկայագիր ե.- Նախկին վարձարանէն աշակերտին պետական թիւ՝ վաւերացուած:

ՎԵՐԱՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ տեղի պիտի ունենան առաւօտեան ժամը 10:00ին:
●Չորեքշաբթի, 17 Սեպտեմբեր 2003 - Լեզուական Գիւրթ
●Հինգշաբթի, 18 Սեպտեմբեր 2003 - Թուրքագրութիւն եւ գիտական Գիւրթ
●Ուրբաթ, 19 Սեպտեմբեր 2003 - Պատմութիւն, աշխարհագրութիւն եւ այլ Գիւրթ

ՎԵՐԱՍՈՒՏ
ա.- BREVET եւ BACC II Երկուշաբթի, 15 Սեպտեմբեր 2003
բ.- Երկրորդական, միջնակարգ եւ նախակրթարան - Չորեքշաբթի, 1 Նոյեմբեր 2003
գ.- Մանկապարտէզ - Հինգշաբթի, 2 Նոյեմբեր 2003
Նկատել ունենալ հետեւեալները:
Գրախանութը բաց է Երկուշաբթի, 8 Սեպտեմբեր 2003էն սկսեալ:
ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԱՅՀԻԼ AFHIL
ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՄԱՐԲԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ
AT HOME
•Wheelchair
•Walker
•Electric Bed
•Manual Bed
•Water Mattress
•Cans
•Sticks
•Serum Tripod
•Walking Frame
HOME MEDICAL EQUIPMENT SERVICES
ՅՈՒՅԱՍԱՐԱԿ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԸՐ ԳՐԱՍԵՆԱԿ՝ ԱՅՀԻԼ, ԱՅԷՏԻ ԶԵԼԵ, Բ. ՅԱՐԱ ԴՆՈ. (02) 242556/7
NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.
www.orientplus.com

Orient plus
KHARBAB TRAVEL & TOURISM
Touch New Worlds
Jarna \$319
9 days - Direct Charter Flight Every Tuesday starting from 8 July
Other Destinations
Boat Trip to Cyprus 3 Days \$190
Boat Trip to Greece \$425
BOOK THIS WEEK AND GET 15% DISCOUNT ASK FOR OUR FREE CREDIT FACILITIES
01.900598, 901598
03.258336, 256254
www.orientplus.com

ՍԵՐՆԻԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԵՐԵՍԱԿՆԵՐԸ

Սերնիափոխուրիներ վերանորոգ երեւոյթ է, իւրաքանչիւր սերունդ գայն կը կրկնէ, կը ստանձնէ կամ կը կրէ իրբէս ի՛ր իւրայատուրիները: Կը խօսուի նաեւ սերունդներու պայքարի մասին: Դասական խօսք, դասական կացութեան մասին: Ճիշդ է, որ նորերը կու գան նոր ըմբռնումներով, նոր գիտութեամբ: Կամայ-ակամայ, ուշ քէ կանուխ, պիտի ապահովեն շարունակականութիւնը: Հայերս բացառութիւն չենք:

Աւելի դիւրին է այս կացութիւնը ըմբռնել, քան՝ անոր պատշաճիլ: Մեր կեանքին մէջ վերապահութիւն ունինք երիտասարդութեան հանդէպ, այդպէս եղած է նաեւ անցեալին, որ նորերը անտեղեակ են, փորձառու չեն: Մանուանդ՝ չունին հայկական բաւարար պատրաստութիւն, չենք ըսեր, որ այդ պակասը երեցներու բերացումն է: Ներագային համակարգը այնպէս է, որ կը սպասենք երիտասարդներու հասունացում-ծերացումը, սերնդափոխութիւնը ուշ կը կատարուի, երբեմն բնախօսական շիջման պատճառով տեղ կը բացուի: Այդ փոփոխութիւնը յաճախ խաբկանք է, որովհետեւ նորերը մինչ այդ կը դարձնեն երիտասարդ ըլլալէ:

Մարդիկ այժմ՝ քսան տարիքին չափահաս են, զարգացած, գիտակից: Տարիքի յառաջացման հետ երիտասարդութեան սահմանը վեր կը քաշենք, հագուստ-կապուստի եւ ծոծրակի վրայ ինկող մագերէտ խաբուսիկ պատկերով: Քսանհինգ տարեկանէն ետք անմիտ բան է երիտասարդութեան մասին խօսիլ:

Ընկերութիւնները, նաեւ հայկական, թարմացման, երիտասարդացման, վերանորոգման եւ փոփոխութեան կարիք ունին: Այս հասկացողութիւնները իրարու կը նմանին, լրացուցիչ են: Կը տպւորեն, երբ կը գործածուին նախ մէջ:

Մեր իրականութեան մէջ, եթէ առարկայական մօտեցում ունենանք, կը հասկնանք, որ երբ նոր սերունդը կը գրկուի մասնակցութեան հնարաւորութենէ, կը հեռանայ, ուրիշ տեղ կը փնտռէ ինքզինք իրականացնելու, այսինքն՝ ինքնահաստատման դաշտը: Մեր օրերուն սերունդները կը փոխուին հնգամեակով՝ իրբէս հետեւանք գիտութեան զարգացման եւ արհեստագիտական արդիականացման: Հայ կեանքի մէջ փոփոխութիւն կը կատարուի, որ անպայման երիտասարդացում չէ, յաճախ հինգ կրկնութիւն է նոր դեմքերով:

Բայց թարմացումը միայն տարիքի հարց չէ, այլ՝ շեշտուած կերպով նոր միտքի, նոր տեսանկիւնի, տարբեր խօսքի: Անփոխարինելիութեան առասպելը կը խափանէ թարմացման ուղին: Առասպելական է, որ թարմացման կարգախօսք հինգ կը կրկնէ, նոյնատեսակ բառապաշարով եւ փառասիրութիւններով, նորերն ալ կը յանձնուին նախախնամական դէմք ըլլալու յաւակնութեան, կը կրկնուի անցեալը: Թարմացումը եթէ չզգրտուորէր գրական գործի մէջ, չաղողութեան պատկով, կը կորսնցնենք դասականը եւ չենք ունենար նորը:

Չապասել, որ վերանորոգումը արհեստականօրէն պատահի. ան արկած չէ. բնախօսական տուեալը, այսինքն՝ տարիքը բաւարար չէ ըսելու համար, որ վերանորոգում կայ: Անհրաժեշտ է խորքի պատաստը, հայկական եւ հայկականի գիտութեամբ եւ գիտակցութեամբ: Ի՞նչպէս խօսիլ դրական վերանորոգման մասին, երբ ազգային լեզուի պաշտպանութիւնը կը համարուի անիմաստ պայքար, ինչպէս ըսուած է՝ յետապահ գուճի կոնի: Ի՞նչ բան պիտի վերանորոգուի, պիտի թարմանայ:

Երիտասարդացումը սոսկ պատկեր չէ, տեսակ մը իմաստ տ'էփինալ: Յաճախ երեցներու կողքին խմբակարգ գեղեցկացնելու համար երիտասարդներ կը ներառուին: Չարմանալի է, որ նորարարները կը համաձայնին լրացուցիչի դեր խաղալ: Հարկ է ցոյց տալ, որ պահելով հանդերձ ազգային հարազատ եմբամողը, յառաջդիմութեան ի՞նչ նոր երաշխիքներ կան, շօշափելի արդիւնքներով, երբ վերանորոգում կայ, երիտասարդացում, թարմացում:

Սերնիափոխութիւնը ամբոխավարական շահագործման ենթարկուել կը վնասէ հաւաքականութեան: Երբ կը շրջապատուինք երիտասարդներով, երեւութապէս կը հետեւինք անոնց հոսանքին, բայց կը ձգտուինք կարգ մը տեսակետներու եւ դիրքերու ամրացման, որոնք ցակեցնելու բարմացման հակահիշք իսկ են: Թարմացում եւ վերանորոգում հարկ է չափել նախնեան դուրս եկող յանդգնութեամբ եւ արդիւնքով: Նախաձեռնութիւններու մարզերը որոշ են, հոն նորութիւն չկայ, կարելիորը ժամանակի ոգիին համապատասխան ծրագիրն է: Հայուն համար կան հիմնահարցեր, ինչպէս՝ սեփական մշակոյթը, ինքնուրիւնը, լեզուն, դարաւոր պատմութեամբ ժառանգուած հող-հայրենիքը, անցողութիւնները, կենցաղը: Առանց այս ամբողջականութեան, վերանորոգումը անխուսափելիօրէն նամբայ կը հարթէ այլաւերման:

Մասնակիին եւ կարկտանը անմիջական յաջողութեան խաբկանք են, բայց՝ անվաղորդային: Երիտասարդացում, թարմացում, վերանորոգում, հմայող բառեր են... Առանց ենթահողի եւ արդիւնքի, անոնք կը դառնան կրկնեւերոյթ, միբարձ:

Յ. ՊԱՆԵԱՆ

ԹՈՒՐԻՔԻԱ ՊԱՏՐԱՆՔՆԵՐ ԿԸ ԱՏԵՂԾԷ

Հայ - քրքական յարաբերութիւններուն վերջին շրջանի գարգացումներուն առնչութեամբ հայրենի «Հայոց Աշխարհ» օրաթերթը հարցազրոյց մը ունեցաւ «Ազգ» օրաթերթի աշխատակից եւ քրքազտ Յակոբ Չաքրեանի հետ: Ստորեւ հարցազրոյցը՝ ամբողջութեամբ:

ՀԱՐՑՈՒՄ.- Պարոն Չաքրեան, որքա՞ն Թուրքիոյ ներկայ կատարուած իրադրութիւնը կ'ուզէ Հայաստանի հետ յարաբերութիւններու բարելաւումը: Այդ ձեւի յայտարարութիւններուն կողքին, վարչապետ էրտողան վերջերս նշեց, թէ սահմանի բացում տեղի պիտի չունենայ, այնքան ատեն որ տակաւին հայերը չեն հրաժարած Հայկական Յեղափոխութեան միջազգային նախաձեռնումից:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Իսկապէս, էրտողան այդ մասին յայտարարեց կարսի մէջ, 27 Յունիսին: Մինչ այդ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի եւ անոր Թուրքիոյ պաշտօնակից Ասյտիւլա Կիւլի հանդիպումէն ետք թրքական մամուլին մէջ արտայայտուեցան կարծիքներ, թէ սահմանի բացման վերաբերեալ սկզբունքային համաձայնութիւն ձեռք բերուած է: Իրբեւ թէ ատիկա Ա. Կիւլի նախաձեռնութիւնն է, որուն կ'աջակցի նաեւ էրտողան:

Այնուհետեւ, 4 Յունիսին թրքական մամուլի մէջ լոյս տեսաւ հրապարակուած մը, թէ Կարսի մէջ էրտողան պիտի յայտարարէ, որ Թուրքիա պատրաստ է իգտորի հատուածին մէջ Ալիճան սահմանակէտը բանալ: Սակայն Կարսի մէջ էրտողանի տրամագծօրէն հակառակ յայտարարութեանն էրտողան Ա. Կիւլի հրեթիւն յայտարարեց, թէ Թուրքիոյ արտաքին քաղաքականութեան օրակարգին վրայ Հայաստանի հետ սահմանը բանալու խնդիր գոյութիւն չունի: Հետեւաբար այստեղ Թուրքիոյ անկեղծութեան կամ կեղծաւորութեան մասին խօսիլը անբարեկամ է: Վերջին շրջանին իրենք միտումնաւոր պատրաստ տեղեցեցին, որ իր թէ ունին Հայաստանի հետ յարաբերութիւնները բարելաւելու ցանկութիւն, որպէսզի այդ քողին տակ կարենան իրենց այլ նախաձեռնութիւնները իրագործել:

Հ.- Ո՞ր նախաձեռնութիւններուն մասին է խօսքը:
Պ.- Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան հետախուզութեան եւ հետազոտութիւններու բաժանմունքի վարիչ Թեգճան վերջերս այցելեց Միացեալ Նահանգներ եւ հանդիպումներ ունեցաւ Հայկական Սփիւռքի շարք մը կազմակերպութիւններուն հետ: Նոյնանման առաքելութեամբ մը Միացեալ Նահանգներ մեկնած Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովի (խորհրդարան. «Ա.») պատուիրակութիւնը հանդիպած էր Ամերիկայի Հայկական Համագումարի ներկայացուցիչներուն հետ՝ իրենց նախաձեռնութեամբ: Այսպիսով Թուրքիոյ կառավարութիւնը դիրքորոշման մեղմացման իր յայտարարութիւններով նպատակ կը հետապնդէր բարեկարգ սոց պատրաստել այս հանդիպումներուն համար: Եթէ հակառակ դիրքորոշում արտայայտուէր, անոնք ուղղակի պիտի ձախողէին:

Հ.- Արդեօք այդ մէկը տեղի չունեցա՞ւ նաեւ այն նպատակով, որ հետագային Միացեալ Նահանգներու եւ Եւրոպական Միութեան ներկայացուցիչ, թէ Թուրքիա քայլ մը առաւ, ինչ որ սակայն ձախողեցաւ: Ինչպէս կը կարգադրուի կեցուածքին պատճառով:
Պ.- Կարսի մէջ արտասանուած էրտողանի խօսքին մէջ ակնարկ կայ, թէ իրենք պատրաստ էին սահմանները բանալու, սակայն հայերը

պատմական խնդիրներ արծարած են Միացեալ Նահանգներու եւ Եւրոպայի մէջ, չեն ճանչնար Կարս - Գիւլիսի համաձայնագիրը: Թէպէտ այսպիսի համաձայնագիր ընդհանրապէս գոյութիւն չունի: Էրտողան նաեւ ըսած է, որ եթէ հայերը հրաժարին Յեղափոխութիւնը հետապնդելէ, իրենք պիտի բանան սահմանը:

Հ.- Այսինքն Թուրքիա կը վերադառնայ նախապայմաններ առաջադրելու իր նախկին մարտավարութեան:
Պ.- Վարչապետի այդ խօսքին մէջ իրականութեան մէջ երեք նախապայման կայ: առաջին՝ չլիջատակել Հայկական Յեղափոխութիւնը երկրորդ՝ պաշտօնապէս հրաժարիլ պահանջատիրութեանն, երրորդ՝ կանխել Սփիւռքի հակամարտական գործունէութիւնը Հայկական Յեղափոխութեան միջազգային ճանաչման ուղղութեամբ: Այսինքն՝ Հայաստան պէտք է այդ իմաստով ազդէ Սփիւռքի վրայ: Աստուք այն նախապայմաններն են, որոնք 1992 թուականին Հայաստանի անկախացումէն ետք առաջադրուած էին Թուրքիոյ կողմէ: Պարզապէս ժամանակին այդ պայմաններուն կատարումը կ'ենթադրէր դիւանագիտական յարաբերութիւններու հաստատում: Իսկ 27 Յունիս 2003ին էրտողանի յայտարարութեան մէջ խօսքը միայն սահմանի բացման մասին է:

Հ.- Ասիկա կը նշանակէ, թէ դիրքորոշումը անելի կոշտացած է:
Պ.- Այո՛, ասիկա կը նշանակէ, որ երկու կողմերուն յարաբերութիւններուն մէջ անցեալ ժամանակաշրջանին ոչ միայն յառաջընթաց չկար, այլեւ Թուրքիոյ դիրքերը 1992 թուականին համեմատութեամբ անելի կարծրացած են:

Հ.- Ի՞նչպէս կը գնահատէք Սփիւռքի հայկական կառոյցներուն արձագանգը Թուրքիոյ այս նախաձեռնութիւններուն:

Պ.- Տեսակէտ չեմ ուզեր յայտնել, բայց պէտք է արձանագրենք փաստ մը: Սփիւռքի հայկական կազմակերպութիւններու հետ հանդիպելու առաջարկը Թեգճան կատարած է Միացեալ Նահանգներու մէջ թրքական դեսպանատան եւ հիւպատոսութեան միջոցով: Սակայն այդ հանդիպումները տեղի պէտք չէր ունենային ՄԱԿի թրքական ներկայացուցչութեան եւ Քալիֆօրնիոյ մէջ Թուրքիոյ հիւպատոսարանին մէջ: Որովհետեւ եթէ հանդիպումներուն նախաձեռնող կողմը յստակ վայր մը կը մատնանշէ, այդ մէկը արդէն ոչ թէ հանդիպում է, այլ հրաւեր կամ ընդունելութիւն:

Դժբարեաբար, Ամերիկայի Հայկական Համագումարը եւ կարգ մը ուրիշ կազմակերպութիւններ, որոնց շարքին՝ Հայ Առաքելական եկեղեցւոյ Միացեալ Նահանգներու Արեւելեան եւ Արեւմտեան թեմերը մասնակցեցան թրքական պաշտօնական հաստատութիւններուն մէջ կազմակերպուած այդ հանդիպումներուն: Ասիկա առնուցիկ պարմանալի է: Կարելի է կարծել, որ մղումը եղած է պետութեան եւ համայնքային ծառայութիւն մատուցելու, բայց Միացեալ Նահանգներու Հայ եկեղեցւոյ թեմերը անմիջականօրէն ենթակա են էլքմիածինի եւ հանդիպումը երթալէ առաջ առ նուազ պէտք էր խորհրդակցիլ կամ մտանշիլ, թէ իրենք կը հանդիպին ոչ թէ Թուրքիոյ հողեւոր գործիչներուն, այլ արտաքին գործոց նախարարութեան հետախուզութեան բաժանմունքի վարիչին հետ՝ Թուրքիոյ պաշտօնական ներկայացուցչութեան մէջ:

«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»

(Արեւմտահայերէնի վերածուած)

ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐ

ԱՐՅԱՆԻ 36 ԳԻՒՂԵՐ ՄԻՆՉԵՒ ՀՈՎՏԵՄԲԵՐ ԲՆԱԿԱՆ ԿԱԶ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՆ

Թեյեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան 36 գիւղեր հասցուած են բարձր եւ միջին ճնշման կազատար խողովակներ, սակայն այդ գիւղերուն բնակչութիւնը ցարգ կազ չի ստանար: Պատճառը ցած ճնշումի կազատարներուն բացակայութիւնն է եւ այդ ցանցը պիտի ամբողջանայ բնակիչներու հաշուով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան փոխ վարչապետ Երուսի Ղազարեան հաւաստիացուց, որ այդ գիւղերը բնական կազով օժտելու ծրագիրը կ'ամբողջանայ յառաջիկայ Հոկտեմբերին:

12 ՀԱԶԱՐ ԳԱՂՁԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ ԲՆԱԿԱՆՆԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ

ՄԱԿԻ Ընդհանուր Ժողովին որոշումով, 20 Յունիսը յայտարարուած է Գաղթականներու Միջազգային Օրը եւ այս առիթով կազմակերպուած խորհրդայն փոփոխութեան, թէ Հայաստանի կառավարութեան առընթեր տեղափոխութեան եւ գաղթականներու վարչութեան պետ Գագիկ Եգանեան ներկայացուց Հայաստանի գաղթականներու հոսքին զրդապատճառները, այն

աշխատանքները, զորս մինչեւ այսօր կառավարութիւնը կատարած է անոնց վիճակը մեղմացնելու նպատակով:

Ըստ Գ. Եգանեանի, Արդպէյճանի կողմէ իրաւանացուած հակահայ ցեղային գտնումին պատճառով, տեղահանուած եւ Հայաստան բռնագաղթած է մօտաւորապէս կէս միլիոն մարդ, որ այն ժամանակ կը կազմէր երկրին բնակչութեան 12 առ հարիւրը: Անոնցմէ միայն 360 հազարը տեղահանուած է 1988-92 տարիներուն: Պատերազմական գործողութիւններուն պատճառով Լեռնային Ղարաբաղի հիւսիսային շրջաններէն ու յարակից բնակավայրերէն Հայաստան տեղափոխուած է 48 հազար հոգի: Չեչենիայէն, Օսեթիայէն եւ Աբխազիայէն բռնագաղթած հայերուն թիւն է 11 հազար, իսկ Հայաստանի սահմանամերձ շրջաններէն ներքին տեղահանուածներուն թիւը՝ 72 հազար:

ՄԱԿԻ գաղթականներու հարցերու գերագոյն յանձնակատարի գրասենեակին եւ այլ նուիրատու կազմակերպութիւններուն ճիգերով այսօր բնակարան ունի բռնագաղթած 3600 ընտանիք եւ տակաւին 12 հազար ընտանիք գրկուած է կենցաղային տարրական պայմաններէ: Այս ուղղութեամբ Հայաստանի կառավարութիւնը կը մշակէ յատուկ ծրագիր, որ կը նախատեսէ 2-2,5 տարուան ընթացքին բնակարան ապահովելու առաջնահերթ կարիք ունեցող ընտանիքներուն: Ըստ Գ. Եգանեանի, նախ-

նական տուեալներով, այդ ընտանիքներուն թիւը 4,5 հազար է:

Ան դրադ առնալով գաղթականներուն քաղաքացիութիւն տալու հարցին, Գ. Եգանեան նշեց, որ մինչեւ 1999 քաղաքացիութիւն ընդունած էր 6-7 հազար հոգի, 2002ին այդ թիւը հասաւ 62-63 հազարի:

Իր կարգին, ՄԱԿԻ նշեալ գրասենեակի տնօրէն Ըոյտ Տէլքիւն նշեց, որ տեսանելի աշխատանք կատարուած է գաղթականներուն վերաբերող օրէնքներու պարագային եւ ընդգծեց այն փաստը, որ օրէնք որդեգրելէն անելի կարեւոր է զայն կիրառելը: Ան անեցուց, որ շտաբի են Հայաստանի նման երկիրները, ուր գաղթականներու համար այսօր սրտցաւ մօտեցում կայ:

ՌՈՒՍԻԱ ԶԻ ԾՐԱԳՐԵՐ ՄԵԾՅՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐ ԶՕՐԱՆՈՒՄԸ

Ռուսիա չի ծրագրեր մեծցնել իր գինուորական ներկայութիւնը Հայաստանի մէջ, յայտարարեց Ռուսիոյ բանակի սպայապետ Երուսի Կարապետի Ստրուտին: «Հայաստանի մէջ ռուսական զօրքերուն յաւելում չի ծրագրուիր: Մեր գնահատանքով, խմբաւորումը, որ այժմ կը գտնուի այդ հանրապետութեան մէջ, Հայաստանի գինեալ ուժերուն գործակցութեամբ ընդունակ է ապահովել Հայաստանի տարածքային ամբողջականութեան, ինչպէս նաեւ

Ռուսիոյ ազգային եւ կարեւոր ռազմագիտական շահերու պաշտպանութիւնը այդ շրջանին մէջ», ըսաւ ան:

«Ինթերֆաքս»ի համաձայն, Պալտեւսքի հարեցուտական շարք մը միաւորներ Վրաստանէն Հայաստան փոխադրելու վերաբերեալ հարցուցումները: Չաւախքի մէջ Վրաստանի նախագահ լիազօր ներկայացուցիչի խախտակազմին եւ շրջանին մէջ գործող միջազգային կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն:

ՀԱՆՏԱՆԻՔԻ ՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՎԱԾԵԼՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ

Չաւախքի Բորժոմ շրջանի Ծաղվեր աւանին մէջ Նազարեթեանները այն եզակի հայ ընտանիքներէն են, որոնք տակաւին կը շարունակեն ապրիլ այդ տեղը:

Մալախյան, «Ա. ԻնՅՕ» լրատու գործակալութեան համաձայն, այս ընտանիքը իր հայ ըլլալուն պատճառով կը հալածուի վրացի պաշտօնեաներուն կողմէ: Վերջերս Վրաստանի հողային վարչութեան աշխատակից մը ներկայացուցած է այս ընտանիքին եւ յայտնած է, որ ամարանոց մը կառուցելու համար առանց հատուցումի պիտի գրաւէ ընտանիքին պատկանող հողամասին մէջ մասը: Նազարեթեանները պատասխանած են, որ այդ հողամասը իրենց սեփականութիւնն է 1946 թուա-

կանէն սկսեալ՝ սակայն վրացի պաշտօնեան շնորհաւ ոճով պատասխանած է, որ՝ «Հայր իրաւունք չունի Վրաստանի մէջ սեփականութիւն ունենալու»:

Այս հարցին կապակցութեամբ Նազարեթեանները դիմած են իրաւապահ մարմիններուն, Սամցխէ - Չաւախքի մէջ Վրաստանի նախագահ լիազօր ներկայացուցիչի խախտակազմին եւ շրջանին մէջ գործող միջազգային կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՃՈՒՐԳԻ ԿԸ ՀԱՆՈՒԻ

Վրաստանի պաշտպանութեան նախարարութեան հովանաւորութեան տակ գտնուող Ախալցը իր հայ ըլլալուն պատճառով կը հալածուի վրացի պաշտօնեաներուն կողմէ: Վերջերս Վրաստանի հողային վարչութեան աշխատակից մը ներկայացուցած է այս ընտանիքին եւ յայտնած է, որ ամարանոց մը կառուցելու համար առանց հատուցումի պիտի գրաւէ ընտանիքին պատկանող հողամասին մէջ մասը: Նազարեթեանները պատասխանած են, որ այդ հողամասը իրենց սեփականութիւնն է 1946 թուա-

Ծարը՝ էջ 8

ASHJIAN TOURS
ԵՐԶԱՊՏՈՅՆԵՐ
 4. 18 - 20 ՅՈՒՆԻՍ Զեսայ, եօթ հայկական գիւղերը, Լաքաքիա, նաւով պտոյտ, նախաձաշ եւ ընթրիք ներառեալ 85\$:

Թուրքիա - Կայսրության

ՀԱՐԹԵԼ ԹՈՒՐԳԻՈՅ ԴԱՄԱՆ

Իրաքի պատերազմից հետո Ուաշինգթոնը կը փորձէ «հարթել թուրքիոյ ճամբան»։ Նախքան 2002ի աշնան իսլամական կառույցներու ընտրութիւնը, Անգարա Միացեալ Նահանգներուն ամէնէն հաւատարիմ դաշնակիցն էր շրջանին մէջ: Իրաքեան պատերազմին ընթացքին թուրքիոյ եւ Միացեալ Նահանգներու միջեւ տեղի ունեցած անհամաձայնութիւնն էր, թուրքիա աշխարհաքաղաքականօրէն շուտաւ կը թուի ըլլալ:

Հին ասացուածք մը կայ, որ կ'ըսէ՝ «Թուրքերը բարեկամներ չունին. բոլորքերուն բարեկամ եղողները ուրիշ բոլորքեր են»: Սակայն աշխարհիկ թուրքերը կ'ըսեն, որ «Արդարութիւն եւ Բարգաւաճում» կուսակցութեան ղեկավարութիւնը իսլամական ուղեգիծ կը վարէ զիրանագիտութեան մէջ: Պաշտօնատար մը գիտել տուաւ, որ՝ «անցեալին մեր ղեկավարները կը խօսէին թրքական շահերու մասին, այսօր անոնք կը խօսին ումմայի մասին (իսլամական միջազգային ազգութիւն):

Հանրային արտայայտութիւններու մէջ պաշտօնատարներ կ'ըսեն, թէ իրենք «չեն սխալած» Միացեալ Նահանգներուն նկատմամբ: Աւելին՝ կառավարութեան բարձրաստիճան խորհրդակցանք մը գրեցաւ «Երբեք» ըսելով, որ ինք «զայտացած» է տեղեկանալով, թէ լեհական կեդրոն մը գոյութիւն ունի Իրաքի մէջ, նկատու առնելով, որ Լեհաստան «պարտուողներուն կողմն էր» Պաղ պատերազմին աւարտին, մինչ թուրքիա Միացեալ Նահանգներուն դաշնակիցն էր: Վերջերս թուրքիա այցելած թուրքեւմերիկեան ընկերակցութիւններու համագումարի պատգամներուն տրուած պատգամը յստակ էր: «Թրքական իշխանութիւնները յստակօրէն մեզմէ կը պահանջեն, որ վերադառնանք Միացեալ Նահանգներ եւ բոլորին ըսենք, թէ թուրքիա ոչ մէկ սխալ գործած է, ինչպէս նաեւ պաշտպանները իրաքեան պատերազմին առաջ թուրքիոյ վարած քաղաքականութեանը, գնահատեցաւ թուրքամերիկացի ղեկավարներէն մէկը:

Պատուիրակութեան անդամներէն մէկը նաեւ ինչ, որ իսլամական շափաւորական վարչապետ Ռեճէփ Թայյիփի հրտոգան պատուիրակութեան քաղաքացի է իսլամներուն միջեւ խաղաղութիւն տարածելու մասին՝ իբրեւ միջոց դրախտ երթալու:

Փակ դռներու ետին, սակայն, թուրքեր կը դժգոհէին, թէ էրտոգանի կառավարութիւնը մեծ սխալ մը գործեց, որ քանչէրք Ուաշինգթոնի հետ տասնամեակներու ընթացքին ստեղծուած ռազմավարական յարաբերութիւնը:

Ըստ թուրք բարձրաստիճան դիւանագէտի մը, Անգարա Մաստամէէն եկող ոչ մէկ վտանգ տեսած է, բայց նեղացած է, երբ ամերիկեան մամուլը սակարկող վաճառականներու տեղ դրած է թուրքերը, իսկ ամերիկեան պատուիրակութիւնը գերակայութեամբ վարուած է Անգարայի հետ եւ եկած է «ընելիքներու ցանկ մը տալու» թուրքերուն: Իրո-

ղութեան մէջ, սակայն, թուրքիա վախ ունէր, որ Միացեալ Նահանգներ անկախութիւն կը շնորհեն քիւրտներուն հիւսիսային իրաքի մէջ, ինչպէս նաեւ կրնան երբեք դուրս չգալ այդ շրջաններէն: Սակայն հիմնականօրէն քրտական հարցն էր, որ կուրդաց թուրքերը՝ Ուաշինգթոնի հետ իրենց յարաբերութիւնը խաթարելու աստիճան:

Չափաւորական իսլամականութիւն տարածելու թուրքիոյ կարողութիւնը իսկապէս կը շփուականցուի: Վերջերս Թեհրանի մէջ տեղի ունեցած իսլամական խորհրդաժողովին ելոյթ ունենալով՝ թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ապտիլլա կիւլի նչեց, թէ ժողովրդավարութիւնն ու այր եւ կին հաւասարութիւնը կը համընկնին իսլամութեան հետ: Սակայն իրողութեան մէջ թուրքիան չունի անհրաժեշտ պիտոճէն, հիմնարկութիւններ, մարդու ձեռնարկութիւնը այդ նախատիպը առաջ տանելու: Ան չափաւորական իսլամականութիւն կրնայ ծանուցել, եթէ նախ կարենայ որ տունը կարգի դնել, ինչ որ կրնայ բաւարար չըլլալ:

Տասնամեակներէ ի վեր երկրի արտաքին եւ ապահովական քաղաքականութիւնը կարողութիւնը բանակին վերնախաւը համաձայն չէ ասոր: Կարգ մը գործակալներ իրենց ուղեգրերը իրենց ինքնիշխանութիւնը կորսնցնել են թարկուելու համար արտաքին գործոց եւ ապահովութեան Եւրոպական Հասարակաց քաղաքականութեան, որ պիտի պարտադրուի եւ սահմանուի Պրիւքսէլի կողմէ: Ոմանք խօսած են թրքական «անկախ» ռազմավարական գործելակերպ որդեգրելու կարելիութեան մասին՝ լքելով Միացեալ Նահանգները եւ աւելի լայն համագործակցութիւն մշակելով Ռուսիոյ, Չինաստանի, Իրանի եւ Իսրայիլի հետ:

Ազգային որոշումներ կայացնելու գործին մէջ բանակին դերը հարցակառուի տակ կ'առնուի: Առեւտրականներ եւ մտաւորականներ զիտել կուտան, թէ մինչ անցեալին թրքական բանակը տագնապներու պարագային կը միջամտէր լուծումներ առաջադրելու համար, բարդ են, որ բանակը պատասխան չունի: Ոմանք աղբիւրներու վերաբաժանում կը պահանջեն, զիտել տալով, որ մինչ քաղաքային պէտքերուն կը յատկացուի «պիւտսէճին 3 կամ

4 առ հարիւրը, բանակը կը ստանայ անոր 30էն 35 առ հարիւրը»:

Հայաստան կը շարունակէ մնալ արիւնոտ վէրք մը թուրքիոյ արտաքին քաղաքականութեան մէջ: Արտաքին գործոց նախարարութիւնը համաձայն է երկու երկիրներուն միջեւ սահմաններուն բացման եւ առեւտուրի աշխուժացման, իսկ բանակը ցարդ վեթոյի կ'ենթարկէ այդ քաղաքաբար: Կարողութիւնը կը մնայ փոխուելու սակայն, որովհետեւ ներկայիս թուրքիա կը հաւատարմ, որ սահմաններուն բացումը պիտի նպաստէ շրջանին մէջ Անգարայի կշիռքին:

Թուրքիա նաեւ դրացի է Իրանին: Բարձրաստիճան պաշտօնատար մը նչեց, թէ Իրան Միացեալ Նահանգներուն ակնկալածէն աւելի մօտ է կորիզային ուժեր արտադրելու ան կրնայ պատրաստուումը ունենալ եւ 6 - 12 ամիսէն: Թուրքիոյ արտաքին գործոց նախարարը կը նպատակադրէ խորհրդակցական հանդիպումներ ունենալ իրանցի իր պաշտօնակիցին հետ եւ տակաւին որեւէ արտայայտութիւն չէ ունեցած իրանի նկատմամբ ամերիկեան քաղաքականութեան զօգով, բացի սովորական դիւանագիտական յայտարարութիւններէն:

Եզրակացնելու համար, թուրքիա կարեւոր է իբրեւ ուժեղութիւն տարանցիկ երկրի եւ իբրեւ ժողովրդավարական եւ չափաւոր իսլամական երկիր, որ մօտէն կը համագործակցի Միացեալ Նահանգներուն հետ Պալքաններու, Աֆղանիստանի եւ Միջին Արեւելքի մէջ: Միացեալ Նահանգները իրենց կարգին պէտք է օժանդակեն թուրքիոյ, որ անդամակցի Եւրոպական Միութեան՝ ըլլալով անոր մեծագոյն երկրներ, ինչպէս նաեւ՝ հաւասարակշիռութեան համար Ֆրանսան եւ Գերմանիան:

Մօտիկ ապագային իրանեան կորիզային զէնքերու ծրագիրը փորձաքար մը պիտի ըլլայ Միացեալ Նահանգներ - Թուրքիա յարաբերութեան ապագային համար: Ուաշինգթոն պիտի փորձէ առաւելագոյն մասնակցութեամբ թուրքիան գինդարանել եւ քաղաքական քայլերուն մէջ՝ միշտ լինելով սակայն անոր դժկամութիւնը իր պէտք ունեցած պահուն:

ԱՐԻԷԼ ՔՈՂԵՆ

«Ուաշինգթոնը թայմը»

ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

Ազրպէյճանի նախագահ Հայտար Ալիբեյի ծննդավայր Նախիջեւանի մէջ Ալիբեյ ընտանիքի համակիրներ որոշած են ժողովրդային նախագահութեան ընտրութեանը Ալիբեյի որդին՝ Իլիամ Ալիբեյը թեկնածու առաջադրել երկրի նախագահական ընտրութիւններուն, որոնք տեղի պիտի ունենան յուլի 15 Հոկտեմբերին:

Պաքուի լրատուամիջոցներուն համաձայն, Ի. Ալիբեյի թեկնածութեան առաջադրման անհրաժեշտ փաստաթուղթերը յատուկ ջանքերով մը օրերուն պիտի ներկայացուին Ազրպէյճանի Կեդրոնական Ընտրական Յանձնախումբին:

Նախապէս, 23 Յունիսին, նախագահութեան թեկնածու առաջադրուած էր Ազրպէյճանի գործող նախագահ Հայտար Ալիբեյ:

Հայ Ալիբեյի թեկնածուութեանը ներկայացուցած էր Ազրպէյճանի իշխող «Ե՛նի Ազրպէյճան» կուսակցութիւնը, որուն նախագահի եւ փոխ նախագահի պաշտօնները կը վարեն յաջորդաբար հայր եւ որդի Ալիբեյները:

ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿԵԱՆՆԵՐՈՒ ՏԵՐՈՒՄԻ ԿԸ ՔՆՆԱՐԿԻՄ ԵՒՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ

Մէկ տարուան քննարկումներէն ետք, Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովը (ԵՆԽՎ) վերջերս որոշեց 1 Սեպտեմբերը իբրեւ վերջին պայմանաւորութեամբ Ազրպէյճանի վերջնականապէս լուծելու համար իր քաղաքական բանտարկեալներուն հարցը: Այլապէս, հաւանական է, որ Ազրպէյճան ենթարկուի խիստ պատժամիջոցներու: Վեհաժողովը այս որոշումին հասաւ քննարկելէ ետք պելճիքացի պատգամաւոր Ճորճ Քլեյրֆայթի տեղեկագիրը:

Տեղեկագիրին մէջ Քլեյրֆայթ պահանջած է, որ Ալիբեյ երկու հիմնական ընդդիմադիրներուն՝ նախկին նախագահ Ալադ Մուլախլովի եւ խորհրդարանի նախկին նախագահ Ռասուլ Կուլիբեյի՝ յարտուութիւն տրուի Ազրպէյճան վերադառնալու եւ յառաջիկայ ընտրութիւններուն մասնակցելու: Երկու քաղաքական գործիչները կը հետապնդուին Ազրպէյճանի իշխանութիւններուն կողմէ, իբրեւ տարագիրներ եւ անոնք տարիներով ապրած են Ռուսիոյ եւ Միացեալ Նահանգներու մէջ:

Նչալ հարցով զբաղող ԵՆԽՎ օրինական հարցերու եւ մարդկային իրաւանց յանձնարումները պահանջած է անմիջապէս ազատ արձակել ութ բանտարկեալներ, որոնք, ըստ իր տեղեկութիւններուն, դատուած են քաղաքական նկատառումներով: Յանձնարումները Պաքու պահանջած է նաեւ ազատ արձակել մօտ 300 քաղաքական բանտարկեալներ, որոնք, ըստ ազրպէյճանական մարդկային իրաւանց կազմակերպութիւններու, բանտարկուած կը մնան Ալիբեյ վարչաձեռնարկին դէմ ընդդիմանալու պատճառով:

«Ազրպէյճան այս հարցը լուծելու քաղաքական պատրաստակամութիւն չէ ցուցաբերած, որովհետեւ հակառակ գոյութիւն ունեցող փաստերու, իշխանութիւնները կը յայտնեն, որ իրենց երկրին մէջ քաղաքական բանտարկեալներ չկան», ըսած է Քլեյրֆայթ իր տեղեկագիրին մէջ: Ան դիտել տուած է, որ Յունուար 2001ին ազրպէյճանական ոչ կառավարական կազմակերպութիւններու կողմէ պատրաստուած ցանկի մը համաձայն, երկրին մէջ 200 քաղաքական բանտարկեալներ գոյութիւն ունէին: Անոնց վրայ պէտք է աւելնան մօտաւորապէս 70 բանտարկեալներ, որոնց անունները մոտացութեան պատճառով չեն ներառուած ցանկին վրայ: Աւելին՝ ան յայտնած է, որ վերոյիշեալ թուականն է ի վեր քաղաքական բանտարկեալներու մօտաւորապէս 50 նոր պարագաներ աւելցած են երկրին մէջ: «Այս մէկը կը շարունակէ («Ա...»), որ Եւրոպական խորհուրդին անդամ ըլլալէն ի վեր այս երկրի իշխանութիւնները չարտուակեն քաղաքական բանտարկեալներ ստեղծել: Այս մէկը բացարձակապէս անընդունելի է», շեշտած է Քլեյրֆայթ:

Քլեյրֆայթ, որ նաեւ ԵՆԽՎ օրինական հարցերու եւ մարդկային իրաւանց յանձնարումները գեղուցաբեր է, յանձնարումներն առաջարկած է մատուրնէ ետք հանդիպիլ՝ ընելու համար Եւրոպական խորհուրդի պահանջները իրագործելու առնչութեամբ Ազրպէյճանի առաջ քայլերը: Ան առաջարկած է, որ եթէ մինչեւ Սեպտեմբերի սկիզբը այդ զօգով բարելաւուած արձանագրութիւն չ'ընտրուի, իրաւանց յանձնարումները վերջերս կ'արժանանան միջազգային ընտանիքի տարբեր կողմերուն բուռն քննադատութեան: Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի նիստին ընթացքին Պաքուի նկատմամբ հնչած բուռն քննադատութիւններուն եկած միասնալու Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան տարեկան հաշուետուութիւնը, ուր Պաքուի իշխանութիւնները կ'ենթարկուին նոյնքան բուռն քննադատութեան:

Նչալ փաստաթուղթին մէջ նշուած է, թէ 2002 - 2003 Ազրպէյճանի մէջ շարունակուած է մարդկային իրաւանց խղճալի վիճակը: Այդ ժամանակամիջոցին Ազրպէյճան լայնածիր քննադատութեան ենթարկուած էր ժողովրդավարութեան, քաղաքացիական հասարակութեան, լրատուամիջոցներու, կրօնի ազատութեան եւ այլ հարցերու առնչութեամբ: Փաստաթուղթը յստակապէս ընդգծած է, թէ Ազրպէյճանի մէջ կառավարութիւնը ենթարկուած է մէկ մարդու՝ երկրի նախագահ Հայտար Ալիբեյի, որ 1998ին նախագահ ընտրուած է լուրջ եւ բազմաթիւ խախտումներով յատկացուած ընտրութիւններու իբրեւ արդիւնք: Նոյնանման խախտումները եղած են նաեւ Ազրպէյճանի 2000ի խորհրդարանական ընտրութիւններուն, ինչպէս նաեւ՝ 2002ի սահմանադրական բարեփոխումներու հանրաքուէին ընթացքին: Փաստաթուղթը դիտել կու տայ, թէ «Ազրպէյճանի դատական մարմինները կը գտնուին գործադիր իշխանութեան հակակշիռին տակ եւ հռչակաւոր են իրենց փտածութեամբ եւ անարդիւնաւէտութեամբ»:

Նախարարութեան փաստաթուղթը կը մանրամասնէ, թէ 2002 - 2003 տարեշրջանին մարդկային իրաւանց բազմաթիւ խախտումներ արձանագրուած են անվտանգութեան մարմիններու աշխատակիցներուն կողմէ, շարունակուած են անհիմն ձեռնարկութիւնները, երկրին մէջ կան քաղաքական բանտարկեալներ: Փաստաթուղթին մէջ նշուած է, թէ ազրպէյճանական կառավարութիւնը ինչպէս առաջ, նոյնպէս հիմա կը սահմանափակէ խօսքի եւ մամուլի ազատութիւնը, հանդիպումներու կայացումը, ինչպէս նաեւ իրտու ռեֆի կը դիմէ շարտուած ցոյցերը ցրուելու համար: Փաստաթուղթին մէջ Պաքուի իշխանութիւնները կը քննադատուին նաեւ քաղաքական կուսակցութիւններու դրանցումը խոչընդոտելու, իրաւաբաններ եւ ոչ կառավարական կազմակերպութիւններ հալածանքի ենթարկելու, «ոչ աւանդական» կրօնական խմբաւորումները ճնշելու, կիններու եւ ցեղային որոշ խմբաւորումներու նկատմամբ խտրական վերաբերմունք որդեգրելու եւ մարդոց առեւտուրի խնդիրը անլոյծ պահելու փաստերուն համար:

ուած չըլլայ, խորհուրդը նոյն ամսուան վերջը վերսկսի Ազրպէյճանի քաղաքական բանտարկեալներու ճակատագիրին մասին իր քննարկումները:

ԵՆԽՎի մօտ Ազրպէյճանի պատուիրակութիւնը նախապէս փորձած էր քննարկումները յետաձգել մինչեւ Յունուար, սակայն չէր յաջողած: Հակառակ Եւրոպական խորհուրդի խիստ կեցուածքին, սակայն, Ազրպէյճանի պատուիրակութեան նախագահ Իլհամ Ալիբեյ խորհուրդին առջեւ իր ելոյթին ընթացքին անգամ մը եւս ժխտած է Ազրպէյճանի մէջ քաղաքական բանտարկեալներու գոյութիւնը:

Անդրադառնալով այս հարցին՝ Եւրոպական խորհուրդի գլխաւոր զարտուղար Ուոլթեր Ծուրմ «Թուրքիան» լրատու գործակալութեան յայտնած է. «Ո՛չ ես, ոչ ալ Եւրոպական խորհուրդը այլեւս համբերութիւն ունինք սպասելու Ազրպէյճանի մէջ քաղաքական բանտարկեալներու ազատ արձակման»: Ան նշած է, որ Քլեյրֆայթի տեղեկագիրին շուրջ քուէարկութեան յետաձգումը մինչեւ Սեպտեմբեր Պաքուի համար քաղաքական բանտարկեալներու հարցը լուծելու վերջին առիթն է: «Աւելի լաւ կ'ըլլայ, եթէ Ազրպէյճանի իշխանութիւնները այդ խնդիրը լուծեն մինչեւ ԵՆԽՎի մարդկային իրաւանց յանձնարումներին յաջող շիտուել: Եթէ այդ մէկը տեղի չունենայ, յանձնարումները համապատասխան քայլեր կ'առնէ», ըսած է ան, զիտել տալով, որ ինք Ազրպէյճան կրնայ այցելել միայն այն ժամանակ, երբ երկրին մէջ քաղաքական բանտարկեալներ գոյութիւն չունենան:

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ՆԵՐՈՒՄ ԿԸ ՇՆՈՐՀԷ ԱԶՐՊԵՅՃԱՆՅԻ ԱՀԱԲԵԿԻՉՆԵՐՈՒՆ

Աֆղանիստանի մէջ իբրեւ Ուսամա ՊըՆ Լատեմի հետեւող ձեռնարկաւում ազրպէյճանցիներ պիտի չ'ապուրի զինուորական առեւտրի կողմէ:

Մօտիկ ապագային Միացեալ Նահանգներ պիտի սկսին «Քալիտա» ղեկավարներու եւ գործօն անդամներու դատաւարութեան: Թայթայն շարժումի յայտնի դէմքեր եւս պիտի դատուին: Քուկայի Կուսակցութեան խարխիւն մէջ արգելափակուած աւելի քան 2000 բանտարկեալներէն միայն 800ը պիտի դատուին. անոնք պիտի դատաւարուին մահապատիժի կամ ցկեանս բանտարկութեան:

Մնացեալները, ներառեալ՝ Աֆղանիստանի մէջ ամերիկացիներու կողմէ ձեռնարկուած ազրպէյճանցի ահաբեկիչներ, ազատ պիտի արձակուին:

Ազատ արձակուելիքներուն շարքին է ազրպէյճանցի Փոլատ Միրաճեւ՝ «Քալիտա»ի գործօն անդամ մը: Ան երկար տարի է ի վեր Կուսակցութեան մէջ արգելափակուած էր եւ իբրեւ ահաբեկչական արարքներու մասնակից՝ պիտի դատուէր: Սակայն նկատի առնելով իր թիւակազին վկայութիւնները (Միրաճեւ դաւաճանեց իր բոլոր ընկերներուն՝ ամերիկացիներուն մատնելով զանոնք), որոշեցին անոր ներում շնորհել: Փետրուարին ազրպէյճանցի ահաբեկիչին Քուկային Հոլանտա փոխարեցին, ուր ան ազատ արձակուեցաւ: Անոր արգիլուեցաւ Պաքուի մէջ իր ազգականներուն եւ բարեկամներուն հետ կապ հաստատել: Ան ստորագրեց յառաջիկայ քանի մը տարիներուն Հոլանտային դուրս չ'գալու պայմանագիրի մը տակ: Ահաբեկիչը նաեւ խոստացաւ երբեք չ'այցելել իսլամական երկրներու:

Ազրպէյճանցի ահաբեկիչին նկատմամբ ամերիկեան յատուկ ծառայութիւններու մարդասիրական վերաբերմունքը խորթ է: Պաքուի մէջ գործող ՊըՆ Լատեմի հետեւողները կը նկատուին կազմակերպիչները եւ գործադրողները ահաբեկչական ահաւոր արարքներուն Ամերիկացիներուն կողմէ կատարուած հետաքննութիւնը փաստած էր, թէ Նայրոպիի մէջ ամերիկեան դեսպանատան ռմբակարկումը կազմակերպելու «Կանալ լոյս»ը տրուած էր Պաքուին՝ հեռապատճէնի (Ֆաքս) միջոցով: Նաեւ իրողութիւն է, որ 1996էն 1998 Ուսամա ՊըՆ Լատեմ 60 անգամ կապ հաստատած է Պաքուի մէջ իր գործակիցներուն հետ: «Ուոլ Սթրիթ Ճըռնըլ»ի համաձայն, յայտնի ահաբեկիչ Այման Ջաուհարի բազմիցս այցելած է Պաքու՝ քննելու համար իր ներկայացուցիչներուն աշխատանքը: Փաստեր կան, թէ Պաքուի մէջ ահաբեկիչ ղեկավարները կը վերահսկէին ոչ միայն արաբ, այլ ազրպէյճանցի ընդատակաւայ գործիչներու հետ: Բաւական հետաքրքրական իրողութիւններ բացայայտուեցան «Քալիտա»ի Պաքուի ըլիլի նախկին համակարգող Ապուլ Ռահման Ֆարիի դատաւարութեան ընթացքին: Ազրպէյճանական «Ջերբալո» թերթը Գահրի Մասա» թերթին քաղելով իր տեղեկութիւնները նշած էր. «Ֆարիին հարց տրուեցաւ, թէ երբեք կապ ունեցած է ազրպէյճանցի պաշտօնատարներու եւ ազրպէյճանական ընդդիմութեան ղեկավարներուն հետ: Ան ամբողջական ձեւով պատասխանեց այս հարցումին՝ տալով անուններ, հասցէներ, հեռաձայնի թիւեր: Հակառակ այս իրողութեան, յատուկ ծառայութիւններ յաջողեցան յայտնաբերել միայն քանի մը ազրպէյճանցիներ, որոնք ուղղակիօրէն մասնակցած են ահաբեկչական արարքներուն: Փոլատ Միրաճեւը անոնցմէ մէկն է: Հետեւաբար այս պայմաններուն մէջ զայն ազատ արձակելու ամերիկեան յատուկ ծառայութիւններուն որոշումը բաւական անսպասելի է:

ԻՐԱՔԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

ԻՐԱՔԻ ԲՈՆԱԳՐԱՒՈՒՄԸ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԵՒ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿԻՑ ՈՒԺԵՐՈՒՆ ԿՈՂՄԵ

Իրաքի վրայ Սատտամ Հիւսէյնի երկարամեայ վարչակարգը տապալեցան ամերիկեան եւ բրիտանական զօրքերու ներխուժումին պատճառով, որոնք պատերազմի ձեռնարկեցին հաւաքական բնաջնջումի գէնքեր յայտնաբերելու անուան տակ եւ տակաւին կը շարունակեն պնդել այդ գէնքերու գոյութեան մասին, թէ եւ այդ առնչութեամբ ոչ մէկ փաստ յայտնաբերուեցաւ: Ամերիկեան քարոզչական մեքենան օգտագործեց նաեւ Սատտամի բուստիրական վարչակարգէն իրաքցի ժողովուրդը ազատագրելու եւ ժողովուրդավարութիւն հաստատելու կարգախօսները:

Բայց ո՞վ Միացեալ Նահանգներուն եւ Բրիտանիոյ տուաւ այդ պարտականութիւնն ու իրաւունքը, որոնք անտեսելով ՄԱԿը, միջազգային ընտանիքը եւ հանրային կարծիքը՝ ձեռնարկեցին պատերազմին եւ գրաւեցին գերիշխան երկիր մը: Արդեօք ո՞վ օրին հաւատաց եւ այսօր ալ կրնայ հաւատալ տրուած պատճառաբանութիւններուն:

Պարզ է, որ հարցը ոչ վտանգաւոր գէնքերու յայտնաբերման, ո՞չ ալ բուստիրական վարչակարգի մը տապալման կը վերաբերի: Հաւաքական բնաջնջումի գէնքեր եւ բուստիրական վարչակարգերու ունին այլ երկիրներ ալ, որոնցմէ ոմանք Միացեալ Նահանգներու մօտիկ դաշնակիցներ են եւ անոնց նեցուկը կը վայելն. անոնց համար ո՞չ մէկ խօսք եւ ոչ մէկ դատապարտութիւն՝ ամերիկեան քարոզչական մեքենային կողմէ:

Ուրեմն, ինչո՞ւ երկու չափ եւ երկու կշիռի այս քաղաքականութիւնը:

Բացայայտ իրողութիւն է, որ Միացեալ Նահանգներու իշխող վերնախաւը եւ անոր մաս կազմող քարիւղի մեծ ընկերութիւններ երկար ժամանակէ ի վեր որոշած էին ձեռք ձգել իրաքեան քարիւղը եւ տիրանալ անսահման հարստու-

րնտանիքին կողմէ շրջափակումի եւ մեկուսացումի ենթակայ ըլլալով՝ տնտեսական եւ զինուորական մեծ հարուստ ստացաւ: Իրաքեան նախկին սաստկացան սանձարձակ բռնութիւնները իրաքցի ժողովուրդին համար անտանելի վիճակ ստեղծուեցաւ, մինչեւ որ ամերիկեան վարչակարգը, Բրիտանիոյ զօրակցութիւնը ապահովելով, 2003ի տարեկիզբին որոշեց ձեռնարկել իրաքը գրաւելու իր ծրագրի գործադրութեան:

ՄԱԿի կողմէ գէնքի քննիչներ տարբեր առիթներով ուղարկուած էին իրաք՝ հաւաքական բնաջնջումի գէնքեր յայտնաբերելու առաջադրանքով, բայց կասկածելի ոչ մէկ բան յայտնաբերած էին: Սակայն, հակառակ այս իրողութեան, 2003ի տարեկիզբին Միացեալ Նահանգներու եւ Բրիտանիոյ հսկայական ուժ սկսան կուտակել Մոցի մէջ, պատերազմի պատրաստութեան նպատակով: Մարտի կիսուն արդէն ամերիկացի 235 հազար եւ բրիտանացի 45 հազար զինուորներ խմբուած էին Մոցի մէջ, ամերիկացի զօրավար Թոմի Ֆրէնքիսը ընդհանուր հրամանատարութեան ներքեւ:

Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ 18 Մարտ 2003ին վերջնագիր ուղղեց Սատտամ Հիւսէյնի եւ անոր ընտանիքին՝ 48 ժամէն հեռանալու երկրէն, այլապէս սպառնալով յարձակման անցնել: Սպառնալիքը կրկնուեցաւ, թէ Սատտամի հեռացման պարագային եւս Միացեալ Նահանգներու եւ Բրիտանիոյ որոշած են յարձակման անցնել: Ստեղծուած կացութեան առջեւ ՄԱԿի քննիչները հեռացան իրաքէն:

Իրաքի մէջ պատերազմի ամէն պատրաստութիւն տեսնուած էր արդէն. զօրաշարժը ամբողջացած եւ ժողովուրդին գէնք բաժնուած էր դիրքերէն համար թշնամիին: Իրենց կարգին, չիի կրօնապետներ կոչ ուղղեցին ժողովուրդին ամէն միջոցներով զէմ դնել ներխուժողներուն:

ԻՐԱՔԻ «ԱՉԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ» ՊԱՏԵՐԱԶՄԸ

Սատտամ Հիւսէյնի ուղղուած Ճորճ Պուշի 48 ժամուան պայմանագրով տակաւին չաւարտած, 19 Մարտ 2003ին Քուէյթի սահմանամերձ Ում Բասրի մօտ կռիւները սկսան, որմէ ետք, պայմանագրով աւարտին, Մարտ 20ի առաւօտ կանուխ ամերիկեան մարտանաւերէ առաջին շրթիւնները արձակուեցան իրաքեան հողերու վրայ: Ամերիկեան եւ բրիտանական ուժեր օդէն, ծովէն եւ ցամաքէն ուժերով ձեռնարկեցին: Իրաք հակադրածք՝ ուժերով Քուէյթի չհիստային շրջանները:

Մարտ 20ին 21 յունիստի կէս գիշերէն ետք ամերիկեան եւ բրիտանական ուժեր անցնելով Քուէյթ - Իրաք սահմանագիծը հրասայլերով եւ փոխադրականներով շարժեցան դէպի Ում Բասրը եւ Պասրա, իսկ այլ զօրամաս մը ուղղուեցաւ դէպի հիւսիս: Իրաքեան ուժեր սկսան այրել քա-

րիւղի հորերը. հրդեհներուն պատճառով սեւ ամպեր բարձրացան, որոնք հասան Քուէյթ: Բրիտանական ուժերը սկսան Քուէյթի սկսան մարել հրդեհները, մինչ ամերիկեան ուժեր գրաւեցին անապատային օդակայան մը:

Մարտ 22ին Նասիրիայի շուրջ կատաղի կռիւներ սկսան, մինչ դէպի Պաղատա տեղափոխուած բանալով՝ դաշնակից ուժեր փորձեցին շրջանցել Պասրան: Մարտ 24ին Քարպայայի շրջանին մէջ հողագործներ վար առին արդիական «Ափաշի» ուղղաթիւ մը:

Կատաղի կռիւներէ ետք, Մարտ 25ին ամերիկեան ուժեր կտրեցին Եփրատը եւ 25 ջրամբար յառաջանալէ ետք կուռի բռնուեցան իրաքեան շարժական ջրկայաններու հետ: Ում Բասրը ինկալ վեցօրեայ բախումներէ ետք: Պաղատաի եւ Պասրայի վրայ ուժերով շարժուեցան սաստկացան, մինչ իրաքեան բանակը սկսաւ այրել մյուսաբաղաքին շուրջ փորուած եւ քարիւղով լեցուած խրամատները՝ ծուխով պատելով շրջապատը: Հիւսիսի մէջ եւս կռիւները սկսան եւ Քերքուք ուժերով շարժուեցաւ:

Մինչ դաշնակից ուժեր կը մօտենային Պաղատաի դռներուն, Մարտ 26ին, ամբողջ օրը եւ յատկապէս գիշերուան ընթացքին Պաղատա ահաւոր կերպով ուժերով շարժուեցաւ. ինկալ բազմաթիւ զոհեր, մինչ հիւսիսային շրջանները արդէն լեցուած էին վիրաւորներով: Ամերիկեան քանի մը զօրամասեր հարուէն եւ հարաւ - արեւմուտքէն շարժեցան Պաղատաի վրայ:

Մարտ 27ին դաշնակից զօրքերը բացին հիւսիսի ճակատը. ամերիկեան օդանաւեր էջք կատարեցին քրտաբնակ շրջաններ եւ ամերիկացի զինուորները հասան քրտաբնակ շրջանը Պաղատաի իշխանութեան ենթակայ շրջանէն բաժնող սահմանագիծին վրայ:

Յաջորդող օրերուն Պաղատաի ուժերով շարժուեցաւ ամենաստիկ կերպով, օդանաւերով եւ միջամաքամասային հրթիռներով. ինկալ բազմաթիւ զոհեր: Դաշնակիցներ թիրախ ունէին յատկապէս Հանրապետական պահակազինուորի կազմակերպչները, որոնք ստանձնած էին Պաղատաի պաշտպանութիւնը:

Մինչ այդ չորս - հինգ հազար արաբ կամաւորները հասան իրաք կուռելու ներխուժողներուն դէմ. սկսան անձնասպանական գործողութիւններ:

Պաղատաի ճամբուն վրայ, Պասրա, Քարպայա, Նահաֆ եւ Նասիրիա կը շարունակէին ինքնապաշտպանութիւնը, մինչ Ապրիլի առաջին օրերուն ջիւրտ ըմբոստներ հիւսիսի ճակատներուն վրայ նահանջի մատնեցին իրաքեան զօրքերը:

Հանրապետական պահակազինուորի զօրամաս մը անշարժութեան մատնելով՝ Ապրիլ 3ին ամերիկեան բանակը գրաւեց Պաղատաի Սատտամ



Իրաքցի հողագործներու կողմէ վար առնուած «Ափաշի» ուղղաթիւը

Հիւսէյնի անուան օդակայանը, մինչ իրաքցի այրեր ու կիներ, գնդացիներով գինուած, պատրաստուեցան դիմադրաւելու ներխուժողները:

Պաղատաի շուրջ օդակը սեղմելով՝ Ապրիլ 8ին ամերիկեան օդանաւեր ուժերով շարժուեցին «Պաղատաի» պանդոկը, ուր հաստատուած էին միջազգային լրատու գործակալութիւններու լրագրողներ. գոհուեցան երեք լրագրողներ եւ հինգ ուրիշներ վիրաւորուեցան:


Ապրիլ 9ին ամերիկեան ուժեր հրասայլերով մտան Պաղատա, մինչ Սատտամի հաւատարիմ ուժեր կը շարունակէին դիմադրութիւնը: Ստեղծուած անիշխանութեան մէջ սկսաւ պետական հաստատութիւններու, թանաքաններու եւ նախագահական պալատներու կողմուկար: Շատեր ուրախութեամբ դիմաւորեցին գրաւող զինուորները՝ իբրեւ ազատարարներ:

Սատտամի հաւատարիմ զինուորներուն վերջին դիմադրութիւնը խորտակելով՝ ամերիկեան բանակը Ապրիլ 13ին գրաւեց Թիքրիթը, գործնապէս վերջ տալով պատերազմին:

Նախագահ Սատտամ Հիւսէյն, ընտանիքը եւ վարչակարգի ղեկավար դէմքերը անհետացան հրապարակէն, բայց այնուհետեւ անոնցմէ ոմանք ձերբակալուեցան:

Ամերիկեան վարչակարգը առժամաբար ձէյ կարնրի յանձնեց Պաղատաի իշխանութիւնը, որ յետոյ փոխարինուեցաւ, եւ Փոյ Պրեմիեր ստանձնեց քաղաքային իշխանութիւնը:

Գրուելու օրերէն իրաքցի ժողովուրդի շարքերուն մէջ սկսած են ձայներ ու խռովութիւններ բարձրանալ. բայց այս ուղղութեամբ, եւ ընդհանուր առմամբ իրաքի ապագային նկատմամբ տակաւին կանուխ է եզրակացութիւններ ու մեկնաբանութիւններ կատարել:



Ամերիկեան ուժեր Պաղատաի Գախազահական պալատին առջեւ

Թեան: Կար նաեւ իրաքի զինուորական կարողականութիւնը քանդելու, անոր ուսումնասիրական դիրքը հակակռեւելու եւ Իսրայէլի ապահովութիւնը երաշխաւորելու ծրագրերը:

ՊԱՏԵՐԱՏՈՒԹԻՒՆ՝ ԻՐԱՔԻ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ
Իրաք 1990էն սկսեալ ՄԱԿի եւ միջազգային

ՍԱՏՏԱՄ ՀԻՒՍԷՅՆ

Սատտամ Հիւսէյն ծնած է 28 Ապրիլ 1937ին, Թիքրիթէն ութ բիւնթր հարաւ գտնուող Աուեա գիւղին հօրեմական ցեխաշէն խրճիթին մէջ: Հայրը՝ Հիւսէյն Մաքեա ահմեդեան, երբ ինք տակաւին քանի մը ամսու էր. պաշտօնական տուեալներու համաձայն, ան մահացաւ. բայց կ'ըսուի, որ ան լքեց իր կիցը եւ հեռացաւ: Սատտամ իր մօր՝ Սուպիայի հետ ապրեցաւ, որ յետոյ վերամուսնացաւ Իպրահիմ Հասանի հետ: Իպրահիմ Հասան խաշնարած մըն էր եւ ճանչցուած էր իր չափազանց անգութ եւ աւազակաբարոյ նկարագրով: Ան Սատտամի հետ սկսաւ վարուիլ իբրեւ ստրուկ՝ օրն ի բուն աշխատեցնելով գայն դաշտերուն մէջ, խաշնքներ արածել տալով, հաւերու ու ոչխարներու գոգութեան դրկելով եւ նուազագոյն յանցանքի համար՝ տեսաբար ծեծելով ու վիրաւորելով:

Տաս տարեկանին Սատտամ հեռացաւ հօրեմական տունէն եւ գնաց Պաղատա, մօրեղբոր՝ Խէյրալլա Թալֆահի մօտ: Խէյրալլա Թալֆահի բանակէն արձակուած սպայ մըն էր, պետական ծախող հարուածի մը մասնակցուած ըլլալուն համար: Սատտամ մօրեղբոր մօտ գրել - կարդալ սորվելէ ետք զրկուեցաւ դպրոց եւ 1953ին, 16 տարեկանին աւարտեց միջնակարգը: Խէյրալլա Թալֆահի Սատտամը դաստիարակեց ազգայնական ոգիով, անոր մէջ արթնցուց անգլիացիներուն եւ թագաւորութեան դէմ պայքարի ոգին, որպէսզի օր մը դառնայ ազգային հերոս մը Սալահետին Ալուպիի նման:

Միջնակարգը աւարտելէն ետք Սատտամ մտաւ գինուորական վարժարան եւ 1956ին մասնակցեցաւ գինուորական պետական ծախող հայրուածի մը:

Մօրեղբոր գարմիկը եւ աները՝ զօրավար Ահմէտ Հասան Պաքը Պասս կուսակցութեան ղեկավար դէմքերէն էր. Սատտամ ծանօթացաւ Պասսի գաղափարներուն եւ 1957ին միացաւ անոր: Այդ օրերուն Սատտամ հմայուած էր Ստալինով եւ կ'երագրէր դառնալ անուանի յեղափոխական, ժողովուրդի առաջնորդ, կուսակցական եւ պետական ղեկավար դէմք: Սատտամ Հիւսէյն 1958ին ամուսնացաւ մօ-

րեղբոր՝ Խէյրալլա Թալֆահի աղջկան՝ ուսուցչուհի Սահիտայի հետ, որմէ ունեցաւ հինգ զաւակ, երեք դուստր եւ երկու ուսուր:

Յայտալ Բ. թագաւոր տապալեցաւ 14 Յուլիս 1958ին, արիւնքի յեղաշրջումով մը եւ զօրավար Ալսուէլ Քարիմ Քասեմ տիրացաւ իշխանութեան: Այնուհետեւ ծնյր առին իրեքայայտ ջոդ խռովութիւններ, ըմբոստութիւններ, ձերբակալութիւններ ու մաքրագործումներ: Նոյն օրերուն Սատտամ իր մօրեղբոր թելադրանքով Թիքրիթի մէջ ահաբեկեց համայնավար գործիչ մը, որ զօրավար Քասեմի մօտիկ գործակիցն էր:

Պասս 1959ին որոշեց ահաբեկել Քասեմը, որ բռնատէր մըն էր իրեն համար, եւ այդ պարտականութիւնը յանձնեց Սատտամ Հիւսէյնի: Սակայն բաւական անկազմակերպ մահափորձը ծախողեցաւ եւ Սատտամ վիրաւորուելով՝ փախուստ տուաւ եւ հետիոտն անապատները կտրելով մտաւ Սուրիա եւ յետոյ հոնկէ անցաւ Եգիպտոս:

Գահիրէ հաստատուելով ան դպրոց մտաւ եւ 1961ին, 24 տարեկանին աւարտեց երկրորդական իր ուսումը, որմէ ետք պետական համալսարան մտաւ իրաւագիտութիւն ուսանելու: Համալսարանին մէջ ան Պասսի բէիջ մը կազմեց:

Գնդապետ Ալսուէլ Սալամ Արեֆ եւ պասսական զինուորականներ 1963 Փետրուարին տապալեցին եւ սպանցեցին Քասեմը, որմէ անմիջապէս ետք Սատտամ ձգուելով համալսարանաւան իր ուսումը վերադարձաւ իրաք:

Նորահաստառ իշխանութիւնը Սատտամի յանձնեց բանտարկեալներ հարցաքննելու եւ դատելու պաշտօնը, զոր ան սկսաւ կիրարկել Պաղատաի Գախազահի թագաւորական պալատին մէջ, որ չարաքանութեամբ վայրի վերածուեցաւ եւ ժողովուրդէն կոչուեցաւ «վերջին պալատ», որովհետեւ հոնկէ ներս մտնողները դժուար բէ գուրս իլլէին: Միաժամանակ Միշէլ Աֆիաք Սատտամը Պասսի շրջանային հրամանատարական խորհուրդի անդամ նշանակեց:

Նոյն տարին՝ 18 Նոյեմբեր 1963ին Գախահ Ալսուէլ Սալամ Արեֆ Պասսը հեռացուց իշ-


խանութեան, որմէ ետք Սատտամ հեղինակազրկուեցաւ եւ հետագային, 1964 Հոկտեմբերին ձերբակալուեցաւ Պասսի դէմ շղթայագերծուած հալածանքներու ծիրէն ներս միջնալէ 1966 բանտ մնաց:

Զօրավար Ահմէտ Հասան Պաքի գլխաւորութեամբ 17 Յուլիս 1968ին կատարուած պետական հարուածով Պասս տիրացաւ իշխանութեան: Պասսի իշխող խմբակը բաղկացած էր Թիքրիթիցներու ընտանեկան սեղմ շրջանակէ մը՝ Պաքի գլխաւորութեամբ, որուն մէջ Սատտամ Հիւսէյն մեծ հեղինակութեան տիրացաւ եւ 1969ին սկսեալ իր ձերբերում մէջ կեդրոնացուց կուսակցութեան, ապահովութեան սպասարկութիւններուն եւ բանակին ղեկավարութիւնը:

Պաքը 1970ական տարիներուն հետգհետէ իր իրաւասութիւնները յանձնեց Սատտամի, որ 1973ին դարձաւ փոխ Գախահի, իսկ 1977ին ստանձնեց կուսակցութեան քարտուղարութիւնը: 16 Յուլիս 1979ին Պաքը հրաժարեցաւ Գախահի կազմէ իր պաշտօնէն եւ Սատտամ Հիւսէյն յաջորդեց անոր իբրեւ Գախահի. կուսակցութեան քարտուղար եւ բանակի գերագոյն հրամանատար. յաջորդ օր, 17 Յուլիսին ան մարշալի տիտղոսութեան ստացաւ:

Անմիջապէս իր իշխանութեան գլուխ եկաւ, յաջորդող օրերուն իսկ Սատտամ Հիւսէյն զանգուածային մաքրագործումներու ձեռնարկեց. առաջին հերթին քաղաքական, կուսակցական եւ զինուորական քան ազդեցիկ գործիչներ մահապատիժի ենթարկուեցան, իսկ քանի մը օր ետք 450 զինուորականներ ու պետական դէմքեր սպանուեցան: Այնուհետեւ Սատտամ բոլոր պատասխանատու պաշտօնները իր ընտանեկան անդամներուն յանձնեց:

Սատտամ Հիւսէյն ծայրայեղ բռնատիրական, անհատի պաշտամունքի վրայ հիմնուած, խրախուսեց ու ամբողջատիրական վարչակարգ հաստատեց, չհանուրաբերելով ոչ մէկ ընդդիմութիւն, ոչ մէկ դժգոհութիւն: Բացարձակ սեփականատէրը դարձաւ իրաքեան քարիւղի բազմապիլիոն տոլար հարստութեան: Թագաւորացի եւ ստալինեան դպրոցի հետեւորդ, անոր իշխա-




նութեան տարիները յատկանշուեցան իրերաջորդ պատերազմներով. հակառակորդներու եւ ընդդիմադիրներու դէմ շղթայագերծուած վայրագ հաշուեյարարներով ու շարդերով: Զխնայեց նոյնիսկ իր ամէնէն մօտիկ նկատուող մերձաւորները, իր հարազատները, իր փեսաները եւ բոլոր անոնք, որոնց վրայ սկսաւ կասկածիլ եւ որոնք փորձեցին հակադրուիլ անոր: Իր իշխանութեան տարիներուն ինկան անթիւ անհամար գոհեր. միայն Իրաք - Իրան պատերազմին երկուստեք ինկած գոհերուն քիւր կը գահաճուրի մ'օտաւորապէս մէկ միլիոն. բիւրտերու եւ շիիներու դէմ շղթայագերծուած հալածանքներուն ու շարդերուն ինկան հարիւր հազարաւոր գոհեր: Միայն 1991 Մարտին խռովութիւնները նգմելու համար քարոզեցան անելի քան հարիւր հազար բիւրտեր եւ 30էն 60 հազար շիիներ: Շարքը կարելի է երկարել:

Ամերիկեան եւ բրիտանական զօրքերու իրաք ներխուժումի օրերուն. 2003 Ապրիլի սկիզբը Սատտամ Հիւսէյն իր ընտանիքին հետ անհետացաւ հրապարակէն:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ԻՐԱՔ - ԳՈՒԷՅԹ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

Իրաքի կողմէ Գուէյթ ներխուժումէն ետք (1990) առաջին անգամ ըլլալով երկու երկիրներուն ֆուտպոլի խումբերը իրարու դէմ ձևակատեցան: Եգիպտոսի մէջ կայացած մրցումը վերջ գտաւ 2-2 հաւասարութեամբ:

Իրաքը ներկայացնող Պաղտատի ոստիկանութեան խումբին կողմէր նշանակեցին Մալեկ Ապտալի Սաթթար (18րդ) եւ Ահմէտ Մանաժիտ (60րդ), իսկ Գուէյթը ներկայացնող խումբին կողմէր պրապիլիցիներ Սոմալիա (13րդ) եւ Ալեւանտրո (87րդ):

ՓԱՌԻԼԵԹԱ ԿՐՆԱՅ ՄԻԱՆԱԼ ՓԱՐԻԶ ՍԷՆ ԺԵՐՍԷՆԻ



Փառլլեթա

Փարիզ Սէն Ժերմէնի պատասխանատուները շարժակիրներին յայտնեցին, թէ ութ միլիոն եւրոյի առաջարկ մը ներկայացուցին Պորտոյին, մայրաքաղաքի կազմին միացնելու համար փորթուգալցի յառաջապահ Փառլլեթան:

Անոնց ներկայացուցած այդ առաջարկը այն տպաւորութիւնը ձգեց, որ Փարիզ Սէն Ժերմէն կ'ուզէ իր պրապիլցի մարզիկը՝ Ռոնալտինիոն այլ կազմի մը փոխանցել, թէեւ այդ ուղղութեամբ ցարդ ոչինչ կը յայտարարուի:

Ռոնալտինիո, որ այժմ իր ամառնային արձակուրդը կ'անցնէ Պրագայի մէջ, սկզբունքով վաղը՝ պէտք է վերադարձաւ ըլլալ փարիզ: Կը կարծուի սակայն, որ ան այդքան ալ մտադիր չէ վերադառնալ եւ միանալ փարիզ Սէն Ժերմէնի իր խմբակիցներուն, կը յայտնէ անոր գործակալատարը եւ եղբայրը՝ Ռոպերթո Ասիս:

Նշենք, թէ 23 տարեկան Ռոնալտինիոյով հետաքրքրուած է նաեւ Չելսի՝ Ռէալ Մատրիտի եւ Մանչեսթր Ետուայթընի կողմէն:

Կ'ակնկալուի, որ Փառլլեթայի փոխանցումը Փարիզ Սէն Ժերմէնին տեղի ունենայ այսօր, կը յայտնեն մայրաքաղաքի կազմին պատասխանատուները, յայտնահանգերը անոր փոխանցման գումարին մասին ցարդ ոչինչ կ'ընդհատուի:

Պորտոյի պատասխանատուները կ'ուզեն ամէն գնով այս եղանակին ծախել Փառլլեթան, նկատի ունենալով որ 2003 - 2004 եղանակի աւարտին ան կը դառնայ զագատ մարզիկ, իրաւունք ստանալով ձրիորէն միանալ իր նախասիրած կազմին:

ՊԱՐՍԵՆԱԼԻ ՀԵՏ ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱ ԳՐՈՒԹԻՒՆ ԶԵՄ ՍՏՈՐԱ ԳՐԱԾ



Մարքէթ' որ կ'ենթարկուի բժշկական քննութիւններու

Պարսելոնայի պատասխանատուները երէկ յայտնեցին, թէ մէքսիքացի միջազգային յետապահ Ռաֆայէլ Մարքէթ, շատ հաւանաբար յառաջիկայ քանի մը օրերուն միանալ իրենց կազմին, չորս տարուան պայմանագրութիւն մը ստորագրելով խումբին հետ:

24 տարեկան Մարքէթ, որ մաս կը կազմէ Մոնաքոյի, երէկ ենթարկուեցաւ յաջող բժշկական քննութիւններու: Պարսելոնայի միանալու պարագային, ան իր կողմէն պիտի ունենայ Մոնաքոյի իր նախկին խմբակիցը՝ Ֆիլիպ Բրիսթանովալը: 2002ի Մոնաքոյի Մեքսիքայի ֆուտպոլի ազգային խումբին խմբապետ Մարքէթի փոխանցումը Պարսելոնային համար հաւանաբար արժէ Տէն 7 միլիոն եւրո:

ՅՐԱՆՍԱՅԻ ՀԵԾԵԼԱՐՇԱԻԻ ՇՐՋԱՎԱԶՔ

ԱԼԵՍԱՆՏՐՈ ՓԵԹԱՔԻ ԶԱՐԵՑԱԻ ՅՐԴ ԸԱՆԳՐՈՒԱՆԸ

Յրանսայի հեծելաշաշտի շրջավազի Յրդ հանգրուանի մրցումը, որ տեղի ունեցաւ երէկ Շարլըվիլ Մեպիերէն՝ Սէն Տիպիէ (167,5 քմ.), վերջ գտաւ իտալացի սփրինգերը Ալեւանտրո Փեթաքիի յաղթանակով: Ան ժամանման գիծ հասաւ արժանագրելով 3 ժամ 27 վայրկեան եւ 39 երկվայրկեան արդիւնք մը:



Փեթաքի՝ որ կը հասնի ժամանման գիծ

Եանի առաւելութիւն մը ունի Մաքկիի վրայ, որ նահանջեց 2րդ դիրք: 3րդ դիրքին վրայ կը գտնուի բրիտանացի Տէյվիտ Միլար 12 երկվայրկեան ետ մնալով ֆրանսացիէն: Այսօր տեղի կ'ունենայ 4րդ հանգրուանի մրցումը ժուանվիլէն՝ Սէն-Տիպիէ (69 քմ.):

Յասսա Պորթոլոյի հեծելաշաշտի 26 տարեկան Փեթաքի, որ անցեալ Կիրակի օր շահած էր Ա. հանգրուանի մրցումը, իտալիտի հեծելաշաշտի ընթացքին (Ժիրո) յաջողած էր շահիլ վեց հանգրուաններ:

Փեթաքիի ետին երկրորդ դիրքը գրաւեցին Ռոմանու Վէնսթէնս (Լաթվիա) եւ Օսքար Տրէյրէ (Սպանիա): Անոնք երկուքն ալ արժանագրեցին նոյն արդիւնքը:

Երէք օր դեղին շապիկը իր մօտ պահելէ ետք աւստրալիացի Պրէտլի Մաքկի դեղին շապիկը վիջեցաւ ֆրանսացի Ժան-Փաթրիք Նապոնի (Տըլաթուր), որ այսպիսով 2001էն ի վեր հանդիսացաւ առաջին ֆրանսացին, որ կը հագնի դեղին շապիկը:

Ընդհանուր դաստիարակութիւնի դիրքը գրաւելով Նապոն այժմ 8 երկվայրկեան արդիւնքով:

- Ստորեւ՝ երէկուան 2րդ հանգրուանին արդիւնքները.
- 1.- Ալեւանտրո Փեթաքի (Իտալ.) 3 ժամ 27' 39"
 - 2.- Ռոմանու Վէնսթէնս (Լաթվիա) նոյնը
 - 3.- Օսքար Տրէյրէ (Սպանիա) նոյնը
 - 4.- Էրիք Յապըլ (Գերմանիա) նոյնը
 - 5.- Ռոպի Մաքիվըն (Աւստրալիա) նոյնը

- Ստորեւ՝ ընդհանուր դաստիարակումը.
- 1.- Ժ.-Փաթրիք Նապոն (Ֆր.) Տըլաթուր 12 ժամ 25' 59"
 - 2.- Պրէտլի Մաքկի (Աւստրալիա) Տէ. Տէ. Ժէ. 8" ուշ
 - 3.- Տէյվիտ Միլար (Բրիտանիա) Քոֆիտիս 12" ուշ
 - 4.- Պէյտըն Քուլ (Աւստրալիա) Տէ. Տէ. Ժէ. 12" ուշ
 - 5.- Հայմար Զուպլեյտա (Սպանիա) Էուսթալթէ 14" ուշ
 - 6.- Եան Ուրիշ (Գերմանիա) Պիանքի 14" ուշ
 - 7.- Եան Քիրսիփոլ (Էսթոնիա) Էյ. 2. Ար. 15" ուշ
 - 8.- Ռոպի Մաքիվըն (Աւստրալիա) Լոթթո 18" ուշ
 - 9.- Վ. Հիւկո Փենս (Քրոմպ.) Եու. Էս. Փոսթալ 18" ուշ
 - 10.- Թայլըր Հէմիլթըն (Մ. Ն.) Սի. Էս. Թի. 18" ուշ
 - 11.- Էնտի Յիլթիկըր (Ֆրանսա) Էյ. 2. Ար. 18" ուշ
 - 12.- Էնն Արմոնթրոնկ (Մ. Ն.) Երէք. Փոսթալ 19" ուշ

- Կէտերու դաստիարակումը.
- 1.- Ռոպի Մաքիվըն (Աւստրալիա) Լոթթո 86
 - 2.- Էրիք Յապըլ (Գերմանիա) Թեյլթոմ 74
 - 3.- Ալ. Փեթաքի (Իտալիա) Յասսա-Պորթո 72

- Խումբերու ընդհանուր դաստիարակումը.
- 1.- Եու. Էս. Փոսթալ 37 ժամ 18' 57"
 - 2.- Պիանքի 8" ուշ
 - 3.- Տէ. Տէ. Ժէ. 17" ուշ

ՄԻՏՕ ՄԻԱՑԱԻ ՄԱՐՍԷՅԻՆ

Մարսելի նախագահ Քրիսթոֆ Պուշէ շարժակիրներին յայտնեց, թէ եգիպտացի յառաջապահ Ահմէտ Միտո Հոսամ միացաւ իրենց կազմին, լքելով իր ակումբը՝ Այաքս Ամսթերտամը:

20 տարեկան Միտո, թէեւ պաշտօնապէս չէ ստորագրած Մարսելի տնայնտէրուն վրայ, սակայն երկու ակումբներուն միջեւ գոյացած համաձայնութիւնը ցոյց կու տայ, թէ ան յառաջիկայ եղանակին մաս պիտի կազմէ Մարսելի:

Միտոյի փոխանցման համար ֆրանսական կազմը Այաքսին հաւանաբար վճարէ 12 միլիոն եւրո:

Այսպիսով, Սթեֆան Վալուսէթէն (Չեխիա) եւ Տիտիէ Տրոկապիյէն ետք (Փղոսկրեայ Ափոնք), Միտո կը դառնայ երրորդ մարզիկը, որ կը միանայ Մարսելի (ամրան ընթացքին):

ԱՐՍԵՆԱԼԻ ՀԵՏ ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱ ԳՐՈՒԹԻՒՆ ԶԵՄ ՍՏՈՐԱ ԳՐԱԾ

Կ'ԸՍԵ ՎԻԵՐԱ

Յրանսացի միջնապահ Փաթրիք Վիերա շարժակիրներին հերքեց շրջան ընող տարածախնդրութիւնները, ըստ որոնց ան անցեալ շաբաթավերջին երէք տարուան նոր պայմանագրութիւն մը ստորագրած է իր ակումբին՝ Արսենալի հետ:

Անցեալ շաբաթավերջին բրիտանական մամուլը յայտնեց, թէ 27 տարեկան Վիերա երէք տարիով երկարաձգած է իր պայմանագրութիւնը, սակայն Արսենալի խմբապետը հերքեց իրապարակուած տեղեկութիւնները, ըսելով, որ ինք թուրքի վրայ ցարդ ոչինչ ստորագրած է:

«Թէեւ այդ ուղղութեամբ բանակցութիւններ տեղի կ'ունենան, սակայն եթէ խումբին հետ որեւէ համաձայնութիւն գոյացնեմ, այդ մէկը պիտի յայտարարուի պաշտօնապէս, ակումբին միջոցով», կ'ըսէ Վիերա:

Ըստ բրիտանական մամուլին, եթէ ան երէք տարիով երկարաձգէ իր պայմանագրութիւնը, Արսենալէն շաբաթական պիտի գանձէ 70 հազար փունտ (116 հազար ամերիկեան տոլար):

Նշենք, թէ անոր պայմանագրութիւնը լոստոնեան կազմին հետ սկզբունքով կ'աւարտի 2003-2004 եղանակէն անմիջապէս ետք:



Վիերա

ԹԵՆԻՍԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԱԲՈՐՈՒՄ

ԱՆՏՐԵ ԱԿԱՍԻ ԵՒ ՄԵՐԵՆԱ ՌԻԼԻԸՍՍ ԿԸ ՄՆԱՆ ԱՌԱՋԻՆ

Ռիմպլիտընի կրան շլէմի մրցաշարքին աւարտին, թենիսի միջազգային ֆետերասիոնը շաբաթակիցներին հրապարակեց տղոց եւ աղջկանց նոր դասաւորումը:

Տղոց ընդհանուր դասաւորման մէջ Անտրէ Ակասի կը մնայ պարագլուխի դիրքին վրայ: Աղջկանց տիտղոսին տիրացած Սերենա Ռիլիքնս ամրապնդեց իր դիրքը եւ այժմ աւելի քան երէք հարիւր կէտով կը գերազանցէ 2րդ դիրքին վրայ գտնուող Քիմ Բրիսթըրը:

Ստորեւ՝ տղոց եւ աղջկանց առաջին տասը դիրքերը գրաւող մարզիկները իրենց կէտերով...


ՏՊԱՔ	ԿԷՏ
1.- Անտրէ Ակասի (Մ. Ն.)	4090
2.- Խոսեան Քարլոս Ֆերերո (Սպանիա)	3875
3.- Ռոսէ Ֆետերէր (Չեխիացի)	3575
4.- Քարլոս Մոյա (Սպանիա)	3160
5.- Լէյթըն Հուրթ (Աւստրալիա)	2945
6.- Էնտի Ռոսթը (Մ. Ն.)	2765
7.- Կիլիքնո Քորիա (Արժանթին)	2250
8.- Ռայնըր Շուկըր (Գերմանիա)	2000
9.- Սեպասթիան Կրոտան (Ֆրանսա)	1950
10.- Երիկ Նովակ (Չեխիա)	1845

ԱՂՋԻԿՆԵՐ	ԿԷՏ
1.- Սերենա Ռիլիքնս (Մ. Ն.)	6060
2.- Քիմ Բրիսթըր (Պելճիքա)	5721
3.- Ժիւսթին Հենին-Հարտէն (Պելճիքա)	4705
4.- Վինըս Ռիլիքնս (Մ. Ն.)	4216
5.- Լինտսէյ Տէվընփորթ (Մ. Ն.)	3626
6.- Էմըլի Մորեսսո (Ֆրանսա)	2932
7.- Ճենիֆըր Քափրիսթի (Մ. Ն.)	2578
8.- Չանտա Ռուպին (Մ. Ն.)	2434
9.- Սեպասթիան Հանթուշով (Սլովակիա)	2078
10.- Անաստասիա Միսքինա (Ռուսիա)	1990

● ԲՐԻՏԱՆԱՅԻ կարգ մը վերերան թենիսիստներ, շաբաթակիցներին առաջարկեցին ռաքէթներուն չափը քիչ մը պտուկցնել, որովհետեւ ըստ անոնց այդպիսի քայլի մը դիմելով, առաջին հերթին մարզիկներուն ունեցած յատկութիւնները աւելիով կ'զգային կը դառնան, ապա երկրորդ մրցումները աւելի հետաքրքրական կը դարձնեն:

Նկատի ունենալով որ թենիսիստները հանդիսացած են բրիտանացիները, կը կարծուի, որ անոնց առաջարկը միջազգային ուշադրութեան արժանանայ:

ՍԱՍՏԻ ՔԱԶԱՅԻ ՅԱԶՈՂ ՄԵԿՆԱՐԿ ԿՊԻՆԵՆԱՅ ՓԻՐՈՒԾԻԱՅ ԸՏ



Սաստի Քազաֆի

Լիպոյ նախագահ Մուամար Քազաֆիի որդին՝ Սաստի, որ անցեալ շաբաթավերջին պաշտօնապէս ստորագրեց Փերուճիայի տնայնտէրուն վրայ, բաւական յաջող մեկնարկ մը ունեցաւ իր ակումբին հետ երբ ֆուտպոլի փարէկամական մրցումի մը ընթացքին նշանակեց երկու կոլ, հակառակ անոր, որ ան դաշտ ներկայացաւ միայն 36 վայրկեան:

Վիրթիւ Պասասոյի (ոչ արհեստավար) դէմ տեղի ունեցած մրցումին, որ վերջ գտաւ Փերուճիայի յաղթանակով՝ 12-0, Քազաֆիի դաշտ ներկայացաւ մէկ վայրկեան ետք (Բ. կիսախաղին) նշանակեց իր առաջին կոլը, իսկ երկրորդը՝ 16 վայրկեան ետք:

30 տարեկան միջնապահ Սաստի, որ մէկ տարուան պայմանագրութիւն մը ստորագրեց Փերուճիայի հետ, մրցումին աւարտէն 9 վայրկեան առաջ փոխարինուեցաւ այլ մարզիկով մը: Փերուճիայի մարզիչ Սերս Քոսմի յայտնեց, թէ Սաստի Քազաֆի 2003-2004 եղանակին լաւ արդիւնք պիտի արձանագրէ իր ակումբին հետ, արդարացնելով իր վրայ դրուած յոյսերը:

Նշենք, թէ անցեալ շաբաթ Սաստի Քազաֆի պաշտօնապէս ներկայացուեցաւ թղթակիցներուն, իր կողքին ունենալով ակումբին նախագահը՝ Լուչիանօ Կաուչին:

ASHJIAN TOURS
Անհատաւոր բայց իրաւ. 6 օր Շարժել Ճէյն (Եգիպտոս) 4 աստղանի պանդոկ, ճաշաճաշ, ճաշ, օդակայանի տուրքով, միայն 295\$ ԱՇՃԵԱՆ ԹՈՒՐԻ:

